



Mkrtič' nağaš ew iwr tağere

**yawelowac mič'nadarean tağer laripowt'ean verac' K. Kostaneanc' ;
hramanaw T. T. Mkrtč' i A. [= I.], venap'ar ew srbaznagoyn kat'owgikosi
amenayn hayoc'**

Kostaneanc', Karapet

Goussier 3344





ՄԿՐՏԻՉ ՆԱԶԱՇ

ԵՒ

ԻՒՐ ՏԱՂԵՐԸ

ՅԱՒԵԼՈՒԱՄ

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՏԱՂԵՐ

ՂԱՐԻՊՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱԵՆ ՀԱՅՈՑ

ՎԱԿԱՐՁԱԳԱՑ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ Ս. ԷԶՄԻԱՇԵՆԻ

1898

3344

Дозволено Цензурою, 27 Марта 1898 г. г. Тифлисъ.

Բ Ա Ճ Ա Ն Ո Ւ Մ Ն

Ա. Մկրտիչ Նաղաշ. նորա կեանքն եւ գործու-
նէութիւնը.

Բ. Նաղաշի տաղերը.

Գ. Յանելուած.

PLATE I

1. *Staphylinus*
2. *Staphylinus*
3. *Staphylinus*
4. *Staphylinus*

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՊԱՐՏԻՆԻ

Ա.

ՄԿԻՐՏԻՉ ՆԱԳԱՇՆՆԵՐ, ՆՈՐԱ ԿԵԱՆՔՆ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԸ:

THESE PAGES ARE NOTED BY THE LIBRARIAN

ՄԿՐՏԻՉ ՆԱԶԱԾ

«Ղարխոյ սիրոյ մի նեղեր.
այս դիժար օրերս անցնի:»

Մ. Նաղաշ.

Իւր հռչակի չափով տակաւին այնքան ծանօթ չէ Հայոց գրականութեան մէջ Մկրտիչ Նաղաշ. նորա երգերը շատ սակաւ են լոյս տեսել և սակաւ ուսումնասիրուել. նորան վերաբերեալ տեղեկութիւնները թերի են և կցկտուր՝ կարօտ վերաստուգելու և ամբողջացնելու. եթէ յիշուով է՝* որ եղել

* Չաւեան Պսմ. Հյց. Գ. 467. Համեստ ունումնասիրութիւն սրդէն շարուած էր, երբ ստացակի Բարեշնորհ Հ. Խաչիկ վարդապետից մի հօտագիր յիշատակարան հետեւեալ վերստուրեանք. «Յիշատակարան գրոցս պատմագրաբար, զոր շինեալ է քաջ քարտուղարն առաջնական եպիսկոպոսն եւ ստուածաբան վարդապետն Տէր Աստուածասուր, խոտորոյին մեծ քարունապետին Յակոբայ Ովսանանց»: Յիշատակարանն ընդօրինակած է ինչպէս երեւում է վերջին տողերից, Հայոց 1227 եւ Փրկչ. 1778 րուին: Այս յիշատակարանը, սպունգաւ իբրեւ յաւելուած Արարատի 1898 թ. յունուարի: Պատճ էնք համարում յիշել, որ Նաղաշի կենսագրութեան վերաբերեալ մի քանի մանրամասնութիւններ եւ յրա-

է նորան ժամանակակից մի ոմն Աստուածատուր ե-
պիսկոպոս, որ յօրինել է նորա կենսագրութիւնը,
մինչև օրս այդ գրուածքը ոչ լոյս է տեսել և ոչ էլ
պատահել է մեզ ձեռագրների մէջ կարդալու: Սորա
կեանքի ու գործերի վերայ ունեցած մեր տեղեկու-
թիւնները ժողովելու, լրացնելու և ամփոփելու հա-
մար առաջ ենք բերում սոյն համառօտ ուսումնա-
սիրութիւնը. թերևս սորանով նպաստած լինինք
ուրիշներին նախ մի գաղափար կազմելու հեղինակի
մասին և երկրորդ փութացնելու այնպիսի գրուած-
ների հրատարակութիւն, որոնցով կարելի լինէր ա-
ւելի ևս լրացնել և լուսարանել Մաղաշի ժամանա-
կի, կեանքի և գործերի նկարագրութիւնը:

ցուցի, տեղեկութիւններ կան նորա մէջ, որ մեկն յիմն կարող ի
հարկ է, ի նկատի ունենալ, ծանօթ լինելով Աստուածասուրի յի-
շաստարանի քնագրին: Այսպէս՝ մեկն իմանում եմ, որ Նաղաշը
խահանայի որդի է. նորա հայրը կոչւում է Տէր Առաքել, մայրը
Հռիւսիսարուն, աւագ եղբայրը Տէր Յովհաննէս, որ կանուխ վախ-
ձանել է, իսկ կրտսերը պարոն Արզար, որ իւր ժամանակին յայտնի
մեծասուն է եղել: Իւր ծնողաց կամեով Մկրտիչը նախ բռնադաս-
տու է աշխարհ մտնելու և սպաս, իւր անդրանկի ծնունդից յի-
տոյ այրիանալով, ընտել է կրօնաւորական կոչւում: Նորա եկեղե-
ցական վիճակը շատ ընդարձակ է եղել. Տէր Կոստանդին է: նորան
հաստատել է արքեպիսկոպոս « ի վերայ Ի Դ. գ ա շ ա գ ա ն ի » .
քերէս այս է պատճառ, որ յիշատակագիրը մի այլ տեղ ստում է
ք է Մ. Նաղաշ Պ2 (1431) քուին «Նստի յարոն հայրապետական
ի Յավիր շահասանի»:

Առաջիկայ ժողովածուի մէջ առաջին անգամն են լոյս տեսնում Նաղաշի մի քանի ոտանաւորները, որոնք կարելի է տեսնել իրենց տեղերում, իսկ միւսները, որոնք սորանից յառաջ լոյս տեսած են եղել, այնպէս ցրուած են և շատերն այնպիսի հրատարակութիւնների մէջ, որ գրեթէ անմատչելի են մնում ընթերցողների բազմութեանը: Նաղաշի այդ ոտանաւորների հետ սոյն ժողովածուի մէջ լոյս են տեսնում և մի քանի այլ երգեր, որոնք հին ժամանակի զգացմունքների թարգման լինելով, աւելի լուսարանում են նորա երգերի բովանդակութիւնը. նոցա հեղինակներից յայտնի են ոմն Զաքար, որ իրեն զարիպ է անուանում, Մառանկոնիսցի աշուղ Բուչակ Նահապետն և Սրմայէի որդին Սիմէօն:

— 205 —

Մկրտիչ Նաղաշ ծնուած է Պոռ* գիւղում, որ Բաղէշ քաղաքի հիւսիս արևելեան կողմն է ընկնում Ս. Ամիրզու (Ամրդու) վանքից ոչ հռու, այդտեղ էր նաև «մեծաշնորհ և արեղերահամբաւ սուրբ և գերապատիւ առաքելոյն Անանիայի և սուրբ Գէորգայ» վանքը, ուր 1418 թուին գրում էր իւր

* Այս գիւղի անունն յիշում է հին յիշատակարաններում, որ կարելի է տեսնել Նոստր Էպոց եր. 56 և 213, և Քարոս Աղար Բ. 495.

յիշատակարանը Մկրտիչ անունով մի սարկաւազոր կարծուում է թէ Նազաշն է: * Յիշատակագիրն իւր գրած Յայսմաւուրքն անուանում է «կարմիրներանգ և լուսաքորթոք կտակ» և իրեն համար այսպէս է խօսում. «մեղսամած և սարտամ ոգի Մկրտիչ Գրիչս, որ կոչիմ սարկաւազ, ասում է, բայց բացասութեամբ և ոչ ստորասութեամբ, զի գործով և խորհրդով ևս վատթարագոյն գտանիմ քան զամենայն ոք ի ռամկաց և զարտուղի մարմնական զնացիւքս. քանզի շնչմունք զանազան տապախսան փորձութեանց շուրջ զմեօք մածեալ կայ, եւ ախտք անհնարինք եւ հեշտութիւն ձգիչ՝ կարիք ի ձեռին՝ եւ անմտութիւն մերձ, ծուլութիւն խաւարեցուցիչ եւ անարիտութիւն պատեալ զինեւ:» Այս խօսքերն ակնարկներ են երիտասարդական հասակին յատուկ թուլութիւնների «անմտութիւն մերձ, ծուլութիւն խաւարեցուցիչ և անարիտութիւն» որոնց շնորհիւ նա կարող էր սխալներ անել՝ ուստի խնդրում է անմեղադիր լինել և տրանջում է իւր ժամանակի վատութեան վերայ. «ի մեծ տարակուսանս կայի, ասում է, վասն զառնութեան ժամանակիս և աւերման աշխարհիս.» բայց աւելի մեծ վիշտ է զգում ազգի ցաւերի մասին. «զազգիս մերոյ տառապանս ո՛վ կարէ պատմել. քանզի ի բազմանալ մեզաց մերոյ փակեցաւ դուռն ոգորմու թեան

Աստուծոյ և պատուհանք բարեութեան բացան»։ Այդ էր Գառնեցի Պօղոս Բ. կաթուղիկոսի ժամանակը (1418-1430 թ.)։ Եթէ արդարեւ Գրիչ սարկառաքը Մկրտիչ Մաղաչն է, որ հաւանական է երևում, աչքի առաջ ունենալով յիշատակարանի մէջ յայնաձ զգացմունքները, ապա ուրեմն նա իւր սկզբնական դաստիարակութիւնն և ուսումն առել է վանքի մէջ և բաւական վարժ է եղել զրոյց բարբառին։ Նորա կեանքի այլ հանգամանքները մեզ ծանօթ չեն. գիտենք, որ 1430 թուին Վահկացի Կոստանդին է. կաթուղիկոսը Սիւ քաղաքում ձեռնագրեց նորան եպիսկոպոս. այդ ժամանակ Մկրտիչ Մաղաչ Ամիգ քաղաքի (Տիարպէքիլի) Հայոց առաջնորդ էր։* Յայնի է նաև այն, որ նա ծաղկելու և նկարելու արուեստ ունէր. Մեծոփայ վանքի մի ձեռագիր ժամագրքի մէջ, որ գրուած է 1432 թուին, յիշատակագիրն ասում է.** «այլ և յիշել՝ աղաչեմ գերջանիկ և զերանաշնորհ զարհի եպիսկոպոսն Տէր Մկրտիչ Ամթայ, ու երփն երփն գունով եւ զանազան երանգով զարդարեաց զսուրբ զիրքս առ յիշատակ բարեաց հոգւոյ իւրոյ և ի պատճառս օրինակի տանս արևելեան»։ այս տեղեկութիւնից երևում է, որ Ամգայ առաջնորդի մականունն Մաղաչ (Մախաչ

* Զամկեսն Պսմ. Հյց. Գ. 466.

** Յուցակ հայ. ձեռ. արհ. մսակնայ. Մխնիսեկի (Վիեննա) 12 Բ.

Նազաշ) համապատասխան է նորա ձեռքի արուեստին և նշանակում է ծաղկոզ, նաշխ անօզ, նկարիչ, նա, ինչպէս երևում է, ունեցել է իւր նկարչութեան առանձին ոճը և իբրև հեղինակ ուրիշ վանքերի էլ օրինակներ է տուել («ի պատճառս օրինակի տանս արևելեան»):

Նաղաշին նկարագրում են իբրև շքեղ կերպարանքի տէր, յաջողակ և «ճոռումբան» անձն. * միևնոյն ժամանակ նորա երգերից երևում է, որ նա զգայուն սրտի, հոգատար բնաւորութեան և առաքինի բարքի տէր մարդ է: Թէպէտ միշտ համեստութեամբ ինքն իրեն մեղազրում է, Այսպիսի անձնական բարեմասնութիւնների շնորհիւ և կարողացաւ նա փառաւորել իւր եկեղեցական ասպարէզն և պատմութեան մէջ հռչակուել իբրև գործունեայ եպիսկոպոս և եկեղեցուն հաւատարիմ վարդապետ: Շատ ծանր պայմանների մէջ էր այն ժամանակուայ Հայոց առաջնորդութիւնը. քաղաքական վիճակն անդադար փոփոխուում էր, իրարու յաջորդում էին մէկը միւսից տարբեր իշխողներ, որոնք սակայն կամայականութեամբ էին կառավարում իրենց յանձնուած ժողովրդի գործերը. օրապետող իշխանութիւնը Բուրդ և Թուրք բռնակալների ձեռքն էր, նոքա բռի և անկիրթ մարդիկ էին և միշտ քրիստոնեաների դէմ մոլեռանդու-

* Չամբ. Գ. 466.

Թեամբ զինուած. նոցա կամքը քաղցրացնելու և միտքը հաճելու համար մեծ ջանք, հատութիւն և համարձակութիւն էր պէտք առաջնորդների կողմից մանաւանդ այն պատճառով, որ հայրապետական իշխանութիւնը բոլորովին թուլացած էր այն ժամանակ և եկեղեցական դասի ազդեցութիւնը մեծապէս խախտուած: Սակայն Մկրտիչ Մաղաշի առաջնորդութեան սկզբնական ժամանակներում համաժամանքներն աւելի նպաստաւոր էին նորանով, որ Միջագետքի և յատկապէս Ամիդ քաղաքի իշխօզն՝ Օթման ամիրան՝ բարեհաճ էր դէպի քրիստոնեաներն և չէր խանգարում առաջնորդին զործելու. այս մի նշանաւոր երևոյթ է ԺՆ. դարում, որ մասմէտական երկու ախոյեան իշխանութիւններ՝ արևելեան և արևմտեան (սև և սպիտակ խոյի) առժամօնակ քաղցր աչքով էին նայում քրիստոնեաների վերայ: Ինչպէս յայտնի է, * արևելեան կողմում Աղուպ բէկը, որ նստում էր Երևան, սիրով ընդունեց Հայոց վարդապետներին և իւր կողմից նպաստեց 1441 թուին Վաղարշապատու ժողովի գումարմանը: Մոյնը տեսնում ենք և արևմուտքում Օթմանի իշխանութեան մէջ: Այն ինչ արգելուած էր նոր եկեղեցիներ շինել և հին եկեղեցիները նորոգել, Մկրտիչ Մաղաշ հրաման առաւ Օթման ամիրայից և շինեց Ամիդ քաղաքի եկեղեցիները, նո-

* Թովմայ Մեծոփեցու Յիշատակարանը, ևր. 68.

բողեց ու փրկեց կործանումից նորա շրջակայքում գտնուած տաճարները և 1433 թու ին Հիմնեց Բարձրահայեաց Ս. Աստուածածնի վանքն Արդնի բերդում, * որ մինչև այժմ էլ կայ: Այն ինչ Միջագետքում արգելուած էին քրիստոնէական պաշտամունքները, նա իւր ազգու միջամտութեամբ արգելքը վերացուց Կեդեցականներն հարկերի տակ ճնշուած հալածուում էին, նա միջնորդեց և ազատեց նոցա այդ նեղութիւնից: Ամից քաղաքում քրիստոնեայ ննջեցեալների համար արգելուած էր դազադի գործածութիւնը, նա հրաման առաւ Օթման ամիրայից քրիստոնեաներին էլ դազադով տանելու իրենց վերջին բնակարանը. ԺՄ. դարի վերջերում ապրող մի երգիչ՝ Յովհաննէս Թլկուբանցին խօսում է դազադի մասին արդէն իբրև ծանօթ, գործածական առարկայի. նա տաւում է.**

«Ով որ հեծնուր ձի բարձրավիզ
Ու թուր քաշէր յամէն դեհաց,
Տեսայ զնա խիստ փոշիման
Երկու փայտի մէջ էր պահած:»

Այս ամէնից զատ Մկրտիչ Մաղաշ, 1439 թու ին արտօնութիւն ստացաւ Օթմանի որդուց Համգայից՝

* Չամբ. Գ. 466. Թորոս Աղբ. Բ. 397, 404. Կօստր շայց 132. վերջինս ղևուժ է 1444 թ. որ կարևի է հանարնչ աւարտան սարին.

** Յովհաննէս Թլկուբանցին եւ իւր սուրբք. եր. 45.

Ամիգի եկեղեցիներինց մէկի վերայ կաթուղիկէ շինելու. չորս տարուամ կանգնեց նա այդ կաթուղիկէն: որն աւարտեց 1443 թուին. գմբէթի բարձր և ահաւոր տեսքը և նորա գեղեցիկ և արուեստաւոր յօրինուածքը գրգռեցին մոլեռանդ մահմետականների նախանձը. նոքա բողոքեցին և խնդրեցին Համզային քանդել տալ այդ նորանշան շինուածքը. Համզան չլսեց. նոքա դիմեցին իրենց աւելի բարձր գեղական իշխաններին, որոնք պատուէր ուղարկեցին Համզային՝ քանդել տալ կաթուղիկէն և նորա բարձրութիւնն հաւաստիել քաղաքի տների բարձրութեանը: Երբ այդ անարդար հրամանը կատարուեցաւ, Մկրտիչ Նազաշ չկարողացաւ հանդուրժել ծանր վշտին. նա անմիջապէս հեռացաւ քաղաքից, նաև իւր վիճակից և ինքն իրեն բանադրեց կամաւոր տարագրութեան. նա գնաց գէպի հիւսիս հասաւ մինչև Կ. Պօլիս, որտեղ նոյնպէս չկարողացաւ գտնել անգորրութիւն, թէև տակաւին քրիստոնեաների ձեռքն էր այն քաղաքը. Կ. Պօլսից անցաւ նա գէպի Ղրիմ, ուր քրիստոնեայ ճէնոփաց յ փարթամ դաղթափայրում՝ Կաթայ քաղաքում (Թէոդոսիա) առժամանակ մնաց իւր բարեկամ Սարգիս վարդապետի մօտ: Մկրտիչ Նազաշի այս ճանապարհորդութիւնից մնացած տպաւորութիւնների արդիւնքն են, անշուշտ, այն երգերը, որոնք պատկերացնում են «Ղարիպի» կեանքը: Թէ ի՞նչ էր որոնում Նազաշ իւր այդ տարագրութեան ժամանակ

և իբրքան տեւեց նորա բացակայութիւնն իւր Բաթու-
 ալից, յայտնի չէ. գիտենք այն, որ Համզայի մահից
 յետոյ նորա որդին Ջհանգիր, քրիստոնեաների վե-
 րայ գութ ունենալով, հրաւիրակներ ուղարկեց և
 Մկրտիչ Նաղաշին պատուով վերադարձուց դէպի
 իւր Բաթուր, և արտօնութիւն տուեց նորան վե-
 րըստին շինելու Ամզայ կաթուղիկէն, միայն չափա-
 ւոր բարձրութեամբ. այդ գործը կատարուեցաւ 1447
 թուին օգոստոսի 6-ին, Նաղաշ իւր առաջնորդու-
 թեան ժամանակ յատուկ ուշադրութիւն էր դարձ-
 նում նաև եկեղեցիների ներքին բարեզարդութեան
 վերայ. անձամբ պատրաստում և պատրաստել էր
 տալիս նոցա համար սպասներ, զարդեր, անօթներ
 ու զգեստներ. իւր ձեռքի այդպիսի յիշատակներից
 մէկը թողեց նա Կաֆայ քաղաքում Սարգիս վար-
 դապետի մօտ այնտեղի եկեղեցու համար. նոյնպիսի
 մի յիշատակ, ինչպէս տեսանք, թողեց նաև Մե-
 ծոփայ վանքին:

Մի դէպք տեղի ունեցաւ Մկրտիչ Նաղաշի ա-
 ռաջնորդութեան ժամանակ, որ կարօտ է վերաս-
 տուգութեան և լուրջ ուսումնասիրութեան. ձեռքի
 տակ չունենալով այն վաւերական աղբիւրները, ո-
 րոնք կարող են մեզ հիմք լինել, բաւական ենք հտ-
 մարում առ այժմ յիշատակել միայն դէպքը: Երբ
 Կոստանդին Է. Վահկացին Հռովմայ պապից հրա-
 ւեր ընդունեց Փլորենտիոյ ժողովին մասնակցելու,
 Աբդրմնէս սարկաւազին իւր թղթով ուղարկեց Ա-

միգ՝ Նաղաշ եպիսկոպոսին յայտնելու և նորա կար-
 ծիքն իմանալու։ Ամբայ առաջնորդն իւր պատաս-
 խանի մէջ, որ գրեց 1436 թուին մայիսի 16-ին,
 խորհուրդ տուեց կաթողիկոսին՝ այն ժամանակ մի-
 այն մասնակցելու ժողովին, երբ Հռովմայ եկեղե-
 ցին հրաժարուի քաղկեդոնական քարոզու թիւնից։
 Եթէ այս տեղեկու թիւնը ճիշդ է, նշանակում է, որ
 Մկրտիչ Նաղաշ հակառակ էր եկեղեցիների միարա-
 նութեան խորհրդին։ Սակայն երեւի այնպէս չէր մը-
 տածում կաթողիկոսը՝ նա Փլորենտիայ ուղարկեց
 Նաղաշի բարեկամին՝ Սարգիս վարդապետին, որ կա-
 թողիկոսի փոխանորդն էր Կաֆայում և հասա-
 Փլորենտիայ այն ժամանակ, երբ ժողովն արդէն փա-
 կուել էր։ *

Այս պէպքից յետոյ տեղի ունեցաւ Վաղար-
 շապատու ժողովն 1441 թուին, ուր որոշուեցաւ՝
 հայրապետական աթոռը Սսից Վաղարշապատ տե-
 ղափոխել։ Թովմայ Մեծօփեցին, որ ճանաչում էր
 Մկրտիչ Նաղաշին և մանրամասն յիշել է ժողովին
 անձամբ կամ զբով մասնակցողներին անունը, ** ոչ-
 ինչ չի յիշատակում Ամբայ առաջնորդի մասին, այդ
 իրողութիւնն աչքի է ընկնում հէնց այն պատճա-

* Չանկեան Գ. 473—477. Մուրաշեան Մ. Վ. պատմ.
 Հ. Ա. ս. եկեղ. 492. Մովսիսեան Յ. Վ. Հ. Ա. ս. եկեղ. պատմ.
 232.

** Թովմայ Մեծօփեցու Յիշատակարանը եր. 51 53.

ունի որ, ինչպէս տեսանք, Մկրտիչ Նազաշ ժամանակի ազգեցիկ եկեղեցականներից մէկն էր: Այդ երևոյթն երկու տեսակ կարելի է բացատրել. կամ Մկրտիչ Նազաշ հակառակ էր Վաղարշապատու ժողովին և օրինաւոր էր համարում Սսի աթոռի զոյութիւնը և կամ քաղաքական պատճառներով անկարող էր նա մասնակցել. վերջինս աւելի հաւանական է այն պատճառով որ Համգայ ամիրան Վաղարշապատու ժողովին նպաստող Աղուպ պէկի հակառակորդն էր. և որովհետեւ Ամգայ առաջնորդն այդ ժամանակ զբաղուած էր կաթուղիկէի շինու թեամբ, որին ձեռնարկել էր Համգայի հրամանով ուստի շատ հաւանական է, որ նոյն իսկ Վաղարշապատու ժողովին մասնակցելու համար ևս պարտաւորուած էր Համգայի հաւանութիւնն առնելու:

Իբրև ժողովրդի հովիւ Մկրտիչ Նազաշ միշտ խնամք ունէր աղքատների վերայ, հոգս էր քաշում քրիստոնեայ գերիներին ազատելու, նոցանից շատերին նոյն իսկ արծաթով գնում էր այլազգիներից, ամէն տեղ օգնութեան ձեռք էր կարկառում և ժողովրդի համար մշտապէս հոգեւոր հայր էր և վշտացեալներին մխիթարիչ: Մորա այգպիսի հոգատարութիւնների համար աւիթներ բնաւ չէին պակասում որովհետեւ իշխողների մէջ հաստատապէս խաղաղութիւն չկար. բացի այդ նոքա աւելի զրգուած էին իրար դէմ պատերազմասիրական ոգւով և նոցա այդ ներքին հակառակութեան բոլոր ծանրութիւնն

ընկնու մէր ժողովրդի վերայ: Այսպէս՝ 1450 թուին արևելեան բռնակալն Զահանշահ յարձակուեցաւ արևմտեան երկրների վերայ, հասաւ մինչև Երզնկայ, այնտեղի իշխանին բռնեց և նորա հետ միասին «քառասուն անուանի ամիրայ» և «տարեալ յարևելս կորուսին» տիրեց արևելեան ուրիշ շատ գաւառներին, և բազմաթիւ գերիներ տարաւ, այնտեղից անցաւ հարաւային կողմը և նստաւ «ի վերայ Ամթայ» և ի վերայ Արզնու, և ի վերայ Մերտինու, հինգ տարի ըղլըր» * այդ հնգամեայ ծանր պաշարումն և անընդհատ կռիւներն երկու կողմերի մէջ, անշուշտ ծանրացան տեղական ժողովրդի վերայ. մի այլ յիշատակագիր Զահանշահի այդ պաշարումները նկարագրելով, ասում է, որ 1451 թուին Շահը «զՍըլաթայ երկիրն և զԲաղիշուն արար գերի եւ զետին վայ հազար բերան» որ զայս խղճերս տեսաք աչօք մերօք ի ժամանակին մերում.» նոյն թուականին մի այլ գրիչ Զահանշահի տիրապետութեան այդ օրերն համարում է «գառն ժամանակ և աւուրք չարութեան» և ասում է, որ թէև Շահը «զամենայն աշխարհս ի հիւքմի կացուցանէր, բայց աւաղ որ զամենայն քրիստոնեայս գառն չարչարէր և անհանգիստ առնէր, հարկապահանջութեամբ կեղեքելով զքրիստոնեայս.» 1553 թուին Մշոյ Ս. Առաքելոց վանքի յիշատակագիրը նոյն բողոքն է յայտնում,

* Թորոս Աղբար, Բ. 380.

ասելով, որ գրում է «ի սովորուկ տարին» որ սովն պատեալ էր զամենայն մարդ ի մեծէ մինչև ի փոքր, որ չէ յիշելոց» 1454 թուին Լիմ անապատ փախած ազատուածներրից մէկը* գրում է «զանբաւ կոծս և զաղիողորմ շիւան լալոցն ո՞վ կարէ պատմել և կամ ընդ գրովս արկանել և որք որ մտաք ի Լիմս, բազում սովով և պանդխտութեամբ տառապեցաք:» Այսպէս ուրեմն նոյն հոգամեայ ժամանակում ամէն տեղ աղէտն անպակաս էր, և նոյն աղէտալի ու թշուառ վիճակին ականատեսս եղաւ անշուշտ և Ամիայ առաջնորդը, որ իւր ժողովրդի միակ հոգարարձուն և մտիթարիչն էր այդ ժամանակ:

Մկրտիչ Նաղաշի կեանքի վերջին տարիները Միջագետքում տարածուած էր ժանտախտ. մի տարեգրութեան** մէջ ասուած է թէ «մահբազում անկաւ յաշխարհն ամենայն և Նաղաշ վարդապետն ասաց զողբն.» այնտեղ այդ գէպքի թուականն է ԶԺԲ 1463. սակայն ինքն Նաղաշ իւր այդ ողբի մէջ ժանտախտի ժամանակը նշանակել է ԶԺԸ—1469 թուականով,*** երբ նա իւր աչքով տեսել է Մէրտին քաղաքի կոտորածն, և այն ազաւորութեան տակ շատ սրտառուչ կերպով պատկերացուցել է կոտորածի

* Նօսարբ Հայոց, հր. 166, 167, 172, 175.

** Նօսարբ Հայոց, հր. 209.

*** Սոյն բուրակնով և նշանակած դեպքը Առաքել Դարժեցու պատմ. մեք, հր. 186.

այլ տը. այսպէս է վերջացնում նա իւր ողոր.

Ես Մաղաչ եպիսկոպոս ծառայ ևուսին
 Աչօք տեսայ դառն կսկիծ ողորմագին.
 Լալով լացի և ողբացի արտասուագին,
 Դառն արտասուօք զողբս ասաց Նոր մեռելին:
 Ո Հայոց մեծ թվականի յինն հարիւրին
 Եւ համառօտ այլ յուելի տասն և ութին
 Աչօք տեսայ զողբ և զհառաչն դառնագին
 ԶՄէրտին քաղաքն արար զամէնն լալագին:

Մաղաչի այդ ողբն իւր ժամանակին այնքան ժողո-
 վրրդականութիւն էր գտել, որ երգում էին նորա-
 տի ննջեցելոց յուղարկաւորութեան ժամանակ և
 յետոյ մտաւ թէ գրչեայ և թէ տպած Մաշտոց-
 ների մէջ: *

Այդ տխուր անցքից յետոյ, երևի, շատ չքա-
 շեց և տեղի ունեցաւ Ամգայ առաջնորդի մահը ԺՆ.
 դարի եօթանասնական թուականներին Սարգիս Բ.
 կաթուղիկոսի ժամանակ: Թէ ո՞ւր ամփոփուեցաւ նո-
 րա մարմինը, մեզ յայտնի չէ. թերևս Արղնոյ բարձ-
 րահայեաց Ս. Աստուածածնի վանքի կամ Ամգայ
 հնութիւնների նկարագրութիւնը մի օր յայտնե-
 շանասէրներին այդ ցանկալի շիրմի տեղն ու վիճակը:

Այժմ մի երկու խօսք Մկրտիչ Մաղաչի գրա-
 կան յիշատակների մասին: ԺՆ. դարու ազբատիկ

* Տես Մայր Մաշտոց, սպագ. Կ. Պոլիս 1803.

գրականութեան * մէջ Նազաշի նման երգիչները չեն կարող առանց նշանակութեան լինել: Մեր անձանութութիւնը նորա գրական երկերին, ժամանակակիցների և յետագաների լռութիւնը նորա մասին, կամ թէ բնդհանրապէս յետին դարերի գրականութեան պատմութեան միանգամայն անմշակ դրութիւնը բնաւ իրաւունք չեն տալիս մեզ մտածելու, որ Մկրտիչ Նազաշ աննշան երգիչ է, թէև ինչպէս երևում է նորա հռչակի գլխաւոր պատճառը նկարչութեան արուեստը պէտք է լինի: Այն հատուկօրը երգերը, որոնք ցայսօր մեզ յայտ-

* Ժե դարում նաղաշի ժամանակակից հեղինակները քռով սահմանափակ են և չեն մտար սակաւ ծակօր. ևսցանից ունակ ժառանգորիւն մնացին նախընթաց ժո դարից ինչպիս Գրիգոր Տաբեւացի (1411 թ.) և Գրիգոր Ծերեկեցեւոյ (1425 թ.) միւսների մէջ փոքր շահ յայտնի են) Թովմայ Մեծնփեցի (1447 թ.) ևս գրած «Անկրկեւորի պատմութիւն» և յիշատակարանն հայրապետական արտի փոխարտիական մասին արդէն ծակօր են (սպ. Փարիզ 1860, Թիւր. 1892). Բ. Անասի Սիւնեցի, Գրիգոր Տաբեւացու ազգականն և աշակերտը. ևս 1403 ին յօրինած «Աղամ գիրք» ըստ Տեւոսթ Կ.Պոլիս 1721 ին. ունի և զիտ մանկանց Գարի, և մի քանի փայտաքանութիւններ. Գ) Անասի Քաղիշեցի, Գրիգոր Ծերեկեցի աշակերտը. ոսանաւորով պատկեր Կ.Յովսէփի

նի են հղել, ցոյց են տալիս, որ նա ունեցել է ընտիր ճաշակ, հասուն միտք և կենդանի բարբառ: Սակայն մեզ այդ երգչի յատկութիւններն աւելի պարզ կերևէին, եթէ միջոց ունենայինք իմանալու, թե ո՛ւր և ի՞նչպէս է զարգացել նորա սկզբնական գործունէութիւնը գրականութեան համար, ո՞չք են հղել նորա մտաւոր զարգացման նպաստող գրագէտներն և առհասարակ ո՞րպիսի շրջանի ծրնունդ է: Այն վանքը, ուր, ինչպէս յիշեցինք, նա գաստիարակուած է և ո՛ւր գրել է իւր մի յիշատակարանը, շատ ծանօթ չէ մեզ այդ կողմից. այն յիշատակարանի բարբառից և ոճից, նմանապէս և նորա մի տաղի («Զինչ որ զեղեցիկ ծաղկունք») ձևից մենք տեսնում ենք, որ Սաղաշի նախնական

վարքը, Կ. Պոլսի առումն 1453 ին, ունի և՛ տաղեր ու գունձեր. Դ) Ա. ք. ր. ա. հ. ա. մ. Ա. ն. կ. ի. շ. ի. ա. ց. ի. ս. ակ. ս. ն. ա. ն. ակ. ա. Ղ. ա. փ. յ. ս. ն. ո. ա. ն. ս. ա. ն. ո. ո. ր. Կ. Պոլսի առումն մասին յոյս տեսած է Ք. Պատկանանի Նշխ Մասնն. Հայոց Ս. Պետերք. 1884 թուին. և) Կ. ի. ր. ա. կ. ո. ս. Ե. ր. զ. ն. կ. ա. ց. ի. կ. ա. մ. Ա. ր. և. շ. շ. ց. ի. կ. ա. զ. ն. կ. Ե. Յայտաւարքն և՛ յորինել է «Արեւելյ Գերարփիկ» շարականը. զ) Ա. մ. ի. ր. ս. ն. ղ. յ. ա. ք. Ա. մ. ա. ս. ի. ա. ց. ի. թ. ի. շ. ի. յ. ր. ի. ն. կ. Ե. Պոլսի յորինել է «Պոլսի քրտչիւրքն» և՛ «Անգիւսաց ակտիս» թղթական գործերը 1466—1482 թուին. և՛ ց) Լոնդոնից հասնումներ յոյս տեսած են շ. Ղ. Ե. Յովականանի «Հնագոստրիւնի Ե. Յ. Ս. ա. կ. վ. ր. ա. յ.» (տես և՛ 339). Կ) Յ. ա. կ. ո. ս. Ղ. ր. ի. մ. և. ց. ի. Կ. Ե. Պոլսի Երզնկացու աշակերտ. ունի գործածներ և՛ կեղեցու կարգերի և՛ տարական արտեսի մասին: Կան և՛ ունեւի սովորներ, որոնց մասին այժմ տալիք չէ իսուել:

կրթութեան վերայ մեծ ազդեցութիւն են ունեցել Ս. Գրիգոր Մարեկացու Աղօթքներն ու Տաղերը: Սակայն Մաղաշի նկատմամբ, առհասարակ վերոյիշեալ հարցերը պարզելու միջոցները պակասում են: Կարող ենք ընդհանուր վիճակից մակարեութիւններ անել, որոնք ներկայ խնդրի նկատմամբ միայն լուսաբանութիւններ են, այլ ոչ ճիշդ եզրակացութիւններ: Այսպէս մենք գիտենք, որ ԺԳ. դարի կրթութիւնն իսկապէս փոխանցումն է ԺԴ. դարից, երբ Հայոց մտաւոր կեանքին ուղղութիւն տւողը միմայն ունիթոռական (միարարական) շարժումներին դիմադրելու ոգին էր. այդ ոգին ստեղծեց վարդապետական աթոռներ և աշակերտական խմբեր, որոնց պարազուխներն էին Յովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Եսայի Նչեցին, Սարգիս Սօրեցին, Վարդան Բաղիշեցին և այլք: Եւ մենք տեսնում ենք, որ ԺԴ. դարի վերջերում արդէն կազմուած կազմակերպուած էին այն վարդապետարանները կամ վարժարանները, որոնք իբրև հաստատուն կէտեր կրթութեան կերպուն էին նոր սերունդի համար: Այն ինչ բուն ունիթոռական շարժումները ԺԴ. դարի վերջերում կանգ առան, դիմադրութեան ոգին մնաց Հայոց աւանդապահ դասի մէջ, որն իւր ջանքերն ուղղեց Սոյ հայրապետական աթոռի դէմ, որպէս զի նորան պահպանէ արևմտասիրական ձգտումներից: Այսպիսով պարզուած էր ամէնի առաջ հայ եկե-

ղեցականի և գիտնականի (այս երկուսն իրարուց
 անբաժան զազափարներ էին այն ժամանակ) նշա-
 նաբանը՝ պահպանել հին աւանդութիւնն և ար-
 զելել ամէն տեսակ նորամուծութիւն, որ քրիս-
 տոնէութեան զիմակով զայիս էր հռովմէական արեւ-
 մուտքից: Այսպէս աւանդեցին պարագլուխ վար-
 դապեաները, և այսպէս շարունակեցին նոցա աշա-
 կերաները: Իւր ժամանակին մենք այդ միտքը պար-
 զել ենք այնպիսի բացատրութիւններով, որոնք շատ
 մօտիկ են ժՆ. դարու մտածող դասի հայեացքնե-
 րին: Ընթերցողը կարող է այդ տեսնել Թովմայ
 Մեծոփեցու Յիշատակարանի առթիւ դրած յա-
 ռաջարանի մէջ. աւելորդ չենք համարում սակայն
 այստեղ վերստին շեշտել այդ մտքի վերայ և յի-
 շեցնել այն թէ ինչպէս ժՆ. դարում համոզուած
 էին, որ ունիթոռները կորած մարդիկ են, արժանի
 Նրասիս կատաղի ալիքներին կուլ գնալու կամ այլ
 պատահարների մէջ իրենց արդար պատիժը գրա-
 նելու. խիստ էր արդարև նոցա ոյգպիսի հայեաց-
 քը՝ բայց անբնական չէր, զի նոքա աւանդութեան
 սրբութեան մէջ էին տեսնում եկեղեցու և հայ-
 բնիքի լրութեան զազափարը: Թովմայ Մեծոփե-
 ցին իւր պատմութեան և յիշատակարանի մէջ շատ
 աւելի առատ նիւթ է տալիս մեզ ժՆ. դարու
 վաստակաւորների այդ զազափարն հասկանալու.
 սակայն որովհետև Մկրտիչ Մաղաշի նկատմամբ
 նորա պատմութեան մէջ բնաւ յիշատակութիւն

չկայ, ուստի մեր խօսքը մասնաւորելու համար թողնենք ընթերցողին օգտուելու այդ պատմութիւնից և անցնենք այն մտքերին, որոնք Մկրտիչ Մաղաշ արժարժում է իւր երգերի մէջ, որպէս զի կարողանանք հասկանալ թէ նա համերանջի է եղել թե՛ դարու այդ ուղղութեանը:

Որ Մկրտիչ Մաղաշ իւր կաթուղիկոսին զրով զգուշացնում է Փլորենտիայ ժողովի հեռեանքներից, այդ արդէն բաւական նշանաւոր երեւոյթ է նորա ուղղութիւնը որոշելու համար (եթէ միայն ճիշդ է այդ տեղեկութիւնը). բայց թողնենք այդ հանգամանքը, և ուշադրութիւն դարձնենք մի այլ երեւոյթի վերայ. մենք տեսնում ենք, որ Հայոց եկեղեցական դասի և նոյն իսկ ներքին կեանքի վերայ Մաղաշի յանդիմանական խօսքերն և թովմայ Մեծոփեցու աուած տեղեկութիւններն իրարու համաձայն են. այս ցոյց է տալիս որ նոքա երկուսն էլ միևնոյն ուղղութեան պատկանող անձինք են: Այսպէս՝ Մկրտիչ Մաղաշ իւր մի խրատական ոտանաւորի մէջ, որ յանդիմանութիւն է ազահներին, յիշում է կաթուղիկոսների շատանալը, աւելորդ կախկոպոսներ օրհնելը, կախկոպոսների կանոնազանցութիւնն և կաշառակերութիւնը, վարդապետների խոտորումն իրենց պարտականութիւնից, արեղաների դատարկաշրջիկութիւնը վանքերից դուրս քահանաների անկարգութիւններն և այլն, ազահութիւնն համարելով այս ամէնի պատճառ. նա ասում է.

• Կաթուղիկոսքն շատացան,
 Անօրինացն բռնութեան
 Եպիսկոպոս օրհնեն անբան,
 Ամէնն վասն ազահութեան:
 Եպիսկոպոսք զկանոնն անցան,
 Որ պոռնկաց կուտան հրաման,
 Կաշառ առնեն կարվիր դեկան,
 Ամէնն վասն ազահութեան:
 Վարդապետերս, որ նոր ելան,
 Բանին եղեն վաճառական,
 Եւ քարոզեն զհաճոյս մարդկան,
 Ամէնն վասն ազահութեան:
 Հաբեղանքն զվանքն ուրացան,
 Է՛ ի գիւղորայք ի շուրջ՝ կուգան,
 Սաղմոս ասելն մոռացան,
 Ամէնն վասն ազահութեան:
 Երիցաներն յիրար կռուան,
 Բիր վերուցին և դաւազան,
 Փետեն մօրուս, կոտրեն բերան,
 Ամէնն վասն ազահութեան: »

Թէ Մկրտիչ Նազաշի այս խօսքերը չափա-
 զանցութիւն չեն, այդ երևում է Թովմայ Մեծո-
 փեցու տեղեկութիւններից, զրէթէ նոյն չարիք-
 ների պատկերն է գնում մեր առաջ Մկրտիչ Նա-
 զաշին ժամանակակից Մեծօփայ վանականը, երբ
 պատմում է, թէ մի քանի տարուայ մէջ Կիլի-
 կիայում վեց կաթուղիկոս նստան, և վեցն էլ գե-

դամահ եղան, և թէ Հայոց եպիսկոպոսները, նուիրակներն և վարդապետներն արծաթսիրութեամբ չարաչար գայթակղեցնում էին ժողովրդին: Թովման օրինակի համար յիշում է Ղազար նուիրակի վարմունքը Յակոբ անունով մէկի հետ, որին նուիրակը զրպարտել էր գողութեան մէջ և, չնայելով նորա երգմանը, չէր հաւատացել, ուստի և Կոստանդին կաթուղիկոսի հրամանով նորա վերայ նզովք էր դրել: Յակոբը բարկացած «գնաց առ անօրէնքն» ասում է թովմայ, եւ եւ ի հաւատոցն, և ի ժամ մահուն ազազակէր: Տէր Յիսուս, զհաւատս իմ ի Տէր Կոստանդինէ խնդրեա՛, և ի բօք անկեալ պիղծ Ղազար նուիրակէն» մասնաւորելով խօսքը կաթուղիկոսների վերայ, ազահութեան չարիքների մասին թովման էլ գրէթէ նոյնն է ասում, ինչ որ Մաղաչ. «Միմոնական արարին զամենայն ազգս, ասում է, և նախատինք ամենայն ազգաց, զի արծաթով տային զնորհս Հոգւոյն Սրբոյ. ի վերայ միոյ վիճակի երեք և չորս եպիսկոպոս ձեռնադրէին, և նոքա ի վերայ միմեանց յարուցեալ, զանօրէնս և զանհաւատս և զսուտ քրիստոնեայս բարեկամս արարեալ, գոյթակղութեամբ զաշխարհս մեր կործանեցին. զանուղղայն և զանկարգս ձեռնադրէին, տեարք զոլով ընչից, և զապքատս խոտէին.» դարձեալ իբրև օրինակ յիշում է թովման թէ ինչպէս մէկից 1500 Ֆլօրին առան և ապա ձեռնադրեցին եպիսկոպոս, և թէ ինչպէս նոքա, որոնք

շէին կարող տալ իրենց կարգը զբաւ էին դնում :
 Նոյն այդ ազահուծեան պատճառով անէծքն ու
 բանադրանքը սովորական էր դառել, կաթուղիկոսն
 եպիսկոպոսին էր բանադրում, եպիսկոպոսը քա-
 ճանային, քահանան ժողովրդին: Այդ երևոյթից
 սարսափած Թովման ասում է. «Նոքա վասն ար-
 ծաթսիրութեանն նոր դժոխք շինեցին հայկազեան
 սեռի: Է Արդեօք այդ իօկ նոր շինած դժոխքի պատ-
 կերը չէ՞, որ դնում է մեր առջև Մկրտիչ Նազաշ
 իւր հեռեեալ խօսքերով:

«Եւ որք կռուին և վշտանան,

Որք նախանձին և գողանան,

Եւ որք խորհին չարիս մարդկան,

Ամէնն վասն ազահուծեան:

Որք հարկանեն և գողանան,

Սուտ երզնուն և ուրանան,

Բազումք ի հաւատոց ելան,

Ամէնն վասն ազահուծեան:

Հարք ի յորդոց բաժանեցան,

Բուն սիրելիքն քակտեցան,

Բազումք եղեն եղբայրասպան,

Ամէնն վասն ազահուծեան:

Տեսայ զոմանս ի նեղ զընտան,

Եւ այլ բազումն ի կախաղան,

Զոմանս որ գլխովին կորեան,

Ամէնն վասն ազահուծեան:»

Կարծես հին գժոխքի արհաւիրքն և մահմե-
տականութեան դրած անբերելի լուծը բաւական
չէին, որ անարժան եկեղեցականների շնորհիւ այս-
պիսի մի նոր գժոխք ևս շինուում է հայ քրիստո-
նէի համար: Այսպիսի չար ժամանակի մէջ ապրե-
լով, Մկրտիչ Մաղաշ, արգեօք իւր զգլուամն յայտ-
նելու մտքով թէ իւր անարժան կարգակիցներին
բացարձակ յանգիմանելու համար, լուրջ կերպով
ինքն իրեն է մեղադրում.

«Գերի՛ Մաղաշ, ողորմելի՛,
ի քեզ հայեաց դու յարածամ.
Զինչ որ այլոց քարոզեցիր,
Ամէնն ի քեզ կայ ի լմանս»
«Զինչ որ յաշխարհս կայ մեծութիւնս,
Զամէնն քեզ կամիս միայն.»

սակայն վսեմ կոչումն և բարձր ստատիճանն իրեն
գանձ և պատիւ համարելով, այսպիսի յորդոր է
ուզղում իւր անձին.

Վարդապետ կերպարանիս,
Սպիտկոպոս գերաստիճանս,
Ունիս շնորհս գանազանս,
Մա գեռ դու չես այգոր հաւանս:
Աղուոր զմիտքդ ժողովէ,
Որ այգկից այլ չեղնես ունայնս,

Զնաւդ ի բեռանց թիթեացո՛ւ:

Ու հասանիս ի յօթեան:

Ընդհանուր հոսանքի մէջ բազմու թիւնից ան-
ջատուած և կեանքի առօրեայ չարիքներին դէմ
բողոքող ազնիւ անձնաւորու թիւններից մէկն է Երե-
ւում իւր ժամանակի մէջ Մկրտիչ Մաղաչ, որ իւր
խրատական մտքերով ազդել է կամենում ապակա-
նութեան վտանգներին մատնուած սերունդի վերայ
և այն միշտ ինքն իրեն յանդիմանելով. մի այլ խրա-
տի մէջ երգիչն այսպէս է խօսում ինքն իրեն հետ.

Մաղաչ հազար վայ քո հոգեօյդ.

Որ անամօթ ես է, աներես.

Զքո Արարիչն ապտակեցին,

Դու մէ՛կ խօսից ոչ համբերես.

Քան զքեզ այլ մարդ չկայ անամօթ,

Որ զայդ զիսես, ոչ համբերես.

Յայնժամ լինիս դու քրիստոնեայ,

Յարժամ խոցեն, նա համբերես

Եւ Բրիստոսի սիրոյն համար

Զչար կամաց ոտքն համբուրես:

Մի ուրիշ տեղ երգիչն աշխարհիս ունայնու-
թիւնը պատկերացնելով, ինքն իրեն ասում է.

Մաղաչ, մի՛ խաբիր մեղօք, մի՛ դատիր անասնոյ նման.

Մի՛ զիրկ աշխարհիս ածեր, մի՛ կարծեր թէ քեզ տի
մնան.

Մայի հասարատ մի՛ լինիր, մեծութիւնն քեզ չի պիտի.
 Ունիս կերակուր հանդերձ, աւելին քեզ ցաւ կուլինի.
 և ճանաչելով, որ վարդապետի պարտքն է՝ խօսքով
 ուսուցածը գործով երեցնել, ասում է.

Է՛ որսրմելի Մաղա՛շ, գու ջանա՛ ու գործէ՛ բարի.

Զքո խրատն գու լսէ՛, որ այլոց ի գործ անցանի.
 Իսկ մի այլ տեղ այդ յանդիմանութիւնն աւելի խիստ
 է հնչում նորա բերանից.

Վարդապետ ձեանաս, զգործն կատարէ՛.

Վայ անձինդ, երբ Դատողն յատեան տիկոչէ.

Տէր կոչիս, տո՛ւր համար գործոյն տիրական,

Տես թէ որչափ արեանն ես գու պարտական.

Ի թողել մեռելոց ճարակ քեզ արա՛.

Երբ նորա օրն եկաւ, քեզ այլ պիտի գայ:

Այ Մաղա՛շ, գու լսէ՛, զինչ որ քարոզես.

Ի՞նչ շահ է քեզ ասելդ, որ ոչ կատարես:»

Իրենով ուրիշներին խրատելու ճանապարհի վերայ
 Մաղաշ պատկերացնում է ոչ միայն ժամանակի չա-
 րիքներն, այլ և իւր տկնկալութիւններն ու դողա-
 փարները. ամէն առիթ նորան նպատաւ որ է երե-
 ւում իւր նպատակի համար. այսպէս երբ նա ծաղիկ-
 ների օրինակով գովում է մարդարեւներին, Զրիստո-
 սին և Լուսաւորչին՝ իւր խօսքն այսպէս է կըն-
 քում.

Մաղաշ թէ խեղք ունես.

Հանցեղ ծաղիկ մի՛ լինիր,

Որ ասնէ զքեզ հողմն ու քամին.

Ծաղիկ լեր բարի գործով:

Որ պառուզ տաս դու հոգւով:

Իսկ մի ուրիշ այլաբանութեան մէջ, ուր վարդին է գովում, ասում է.

«Դու զայն վարդն սիրէ, որ դեղ կենաց է»:

Այս ամէնից շատ պարզ երևում է, որ Ամ-
գայ առաջնորդը ճանաչում էր իւր ժամանակի դրու-
թիւնն, ինքն իրեն ազատ չէր համարում նորա
ազգեցութիւնից, բայց միևնոյն ժամանակ այնքան
արթուն խղճի տէր անձն էր, ու իրեն պակասու-
թիւններն յանդիմանելով, խրատական օրինակ էր
լինում ժամանակակիցներին և ապագաներին:

Իւր գործունէութեան եղանակով և իւր գրա-
կան վաստակներով Մկրտիչ Մաղաշ խիստ տարբեր-
ւում է իւր ժամանակակիցներից: Որքան յայանի
է, աստուածաբանական, իմաստասիրական կամ
պատմական երկերի ստուար հատորներ թողած չէ
նա իւր յեանորդներին. վանքերում փակուած և
միայն տեսութիւններով զբաղուած չէ նա իւր ա-
ռաջնորդութեան ժամանակ. նորան զբաւել է ժո-
ղովրդի վիճակը, և ինչպէս երևում է, նա միշտ
ապրել է իւր ժողովրդի ցաւերի ու հոգսերի մէջ:
Ուշադրութիւն դարձնենք առանձնապէս նորա եր-
կու ազգերի վերայ, որոնք նուիրել է նա Ղարի-
պին. չկայ նորա երգերի և ոտանաւորների մէջ

ուրիշ այնպիսի մի արտայայտութիւն, որ աւելի լաւ պատկերացնէր մեր առջև Նազաշի զգացմունքները, որոնք միևնոյն ժամանակ ժողովրդական ոգու յայտարարներ են, որոնք այն օրից մինչև օրս շարունակ իշխում մ'են հայ ժարդու սրտի վերայ՝ առանց խտրութեան տեղի, ժամանակի և այլ հանգամանքների. կարելի է ասել, որ այդ զգացմունքները Նազաշինը չեն, այլ ամէնքինը, և առաջինն, եթէ չենք սխալու մ, այդ երգիչն է, որ գրչի ծայրով պատկերացուցել է պանդխտութեան այդ թըշուառ կողմերը:

Հայոց մէջ պանդխտութեան վիճակը նորութիւն չէ. ԺԱ. դարու վերջերից սկսած նոցա համար սովորական դառաւ՝ դիմել օտար երկրներ և ապրուստ ձարել: Վաճառական մարդիկ պանդխտութեան էին ելնում ոչ օրերով, ամիսներով, այլ երբեմն և տարիներով. նոքա ժամանակաւորապէս իրենց ընտանիքից անջատուած ուղևորներ էին, որոնց դարձի յոյսը միշտ կար. այդպիսիների վիճակը շատ անգամ խիստ անստոյգ էր. ճանապարհների աւազակութեան վտանգը, ծովագնացութեան անսպասելի փորձանքները, օտհմանակից աէրութիւնների և մանր մունր իշխանութիւնների անակրեկալ ընդհարումներն և կռիւները, վերջապէս՝ նոյն իսկ վաճառականութեան գործից անբաժան ձախող պատահարներն օտար երկրում այն է՝ օգի, ջրի, ապրուստի խիստ փոփոխութիւնը, անձնական

Հիւանդութիւնը, կորուստներն և այլն այն ծանր
 և մութ ժամանակների համար այնպիսի հանգա-
 մանքներ են, որ շատ ու շատ դառնացնել կարող
 էին պանդխտութեան գնացողների վիճակը, և սար-
 սափ ազդել նոցա սպասող ազգականներին և բա-
 րեկամներին, և եթէ այս ամէնի վերայ աւելաց-
 նենք հացի թանդութեան, սովի, երկրաշարժի,
 ժանտախտի և այլ այսպիսի դիպուածները, այն
 ժամանակ շատ հասկանալի կլինի մեզ համար թէ
 ինչո՞ւ զարխութիւնն այնպիսի ծանր և թշուառ
 վիճակ էր համարում մեր կեանքի մէջ: Սակայն
 վաճառականների պանդխտութիւնը դեռ այնքան
 սարսափելի չէ, քանի որ այդ վիճակից շահի և
 մխիթարութեան ակնկալութիւն կար, որքան այն-
 պիսիների պանդխտութիւնը, որոնք թողնում են
 իրենց բնակավայրն և գնում են բազմ որոնելու,
 աշխատանք գտնելու, վաստակ անելու և իրենց
 տունը պահելու, որոնք երբեմն օտարութիւն են
 ընարում ամբողջ ընտանիքով կամ որոնք թողնում
 գնում են իրենց հայրենիքում հանգիստ ու դադար
 չունենալու պատճառով: Այդպիսիներն ականայ կա-
 մօք կրում են ոչ միայն վաճառականներին սպառ-
 նացող բոլոր հանգամանքների երկիւղը, այլ և դառն
 աղքատութեան և մշտական կարօտութեան, չքա-
 ւորութեան անտանելի լուծն օտար երկրում: ահա
 դոքա են իսկական զարխները, դոքա են, որոնց
 համար մեր Փրկիչն ասել է. «Օտար էի և ժողո-

վեցիք զիս» (Մատթ. իՆ. 35): Այլ է, եթէ այդպիսիներն յաջողութիւն գտնեն, այդ դէպքում նոցա վիճակն այնքան արգահատելի է, որքան և միւսներինը: Իսկ եթէ յաջողութիւնը պակասում է, և կեանքի դառնութիւններն օր ըստ օրէ զգալի են լինում, այն ժամանակ նոցա դրութիւնն անելանելի է: Այս իսկ թշուառ և անելանելի վիճակի պատկերն է, որ հանդէս է բերուած Հայոց մի քանի միջնադարեան ժողովրդական երգերի մէջ: Մեզ յայտնի չէ, թէ այդ նիւթի վերայ հնագոյն երգը որ ժամանակից է, առ այժմ մեր առաջ կան Նազաչի երկու տաղերը, որոնք իրենց մէջ բովանդակում են նոյնպիսի մտքեր և դարձուածներ, ինչպէս միւս երգերը: Նոցա մէջ մի առընչութիւն կայ. սակայն պարզ է, որ միւս երգերն յառաջ են եկել Նազաչից յետոյ: Այսպէս չենք կարող ասել միայն Լեոն իշխանի գերութեան առթիւ պահուած ժողովրդական երգի մասին. այդ, անշուշտ, աւելի հին ծագումն ունի, թէև մենք առ այժմ չունինք միջոց նորա հնութիւնը որոշելու: Լեոն իշխանի գերութեան շրջանը պանդխտութեան շրջան համարելով, մենք կը տեսնենք, որ ժողովուրդն այդ իշխանին ներկայացնում է ճիշդ այնպէս, ինչպէս ինքն է հասկանում պանդխտի վիճակը: Եզիպտոսի սուլթանը Լեոնին տալիս է իւր «ոսկի գունդը» և հրապուրում է նորան իւր հաւատն ուրանալու.

«Սուլտանն ի մօյտան ելել,
 Իւր ոսկի գունտան կու խաղայ.
 Խաղաց ի Լեոնն երեւ.
 Առ խաղա՛ ու տո՛ւր տատայից.
 Լեոն՝ գու տաճիկ լինիս,
 Ես ու իմ տատաս քեզ գերի.»

սակայն Լեոնի աչքին ոչ ոսկի գունտան էր երևում,
 ոչ սուլթանի տէրութիւնը, ոչ նորա ամբողջ ըն-
 տանիքով իրեն գերի գրուելը. նա ակտուր և լուռ
 սպասում է իւր վերադարձին.

«Լեոնն ի բերդին նստել,
 Դաստռակն աչիցն, ու կուլար.»

և իրրև գերի, որ ոչ ղքի մատչելի չէր, նա իւր
 միտքը ծնողացն յայանելու նպատակով կանչում է
 դէպի այն կարաւանը, որ Սիս էր գնում:

«Զէրվանտ, որ ի Սիս կ'երթաս,
 Դուն խապար տանիս պապայիս.»

Այս էր, որ հայրն էլ եկաւ և ազատեց իւր
 որդուն: Այսպէս է նկատել ժողովուրդը պանդըխ-
 տին. նա գերի է, և նորա միտքը հասկանում են
 միայն նոքա, որոնք վերադառնում են հայրենիք:
 Այլաբանութեան մէջ պանդուխտը վանդակի մէջ
 բռնուած մի թռչուն է, որին ինչ ուզում ես տո՛ւր,
 նա չի կարող իրեն ազատ զգալ, ինչ ուզում ես
 խոստացիր, նա չի կարող գոհանալ: Պանդխտու-
 թեան այլաբանական նշանն է կռուելը (մերթ ա-

բազիլ) ծիծեռնակ), [Թռչուններ, որ արդարև պարբերաբար գնում և վերադառնում են ինչպէս պանդուխաներ: Այսպէս՝ մի ժողովրդական երգի մէջ զարիպն իրեն նմանեցնում է այն վայրի հաւուկին, որ բռնուած է վանդակի մէջ և անկարող է խառնուել [Թռչունների երամի մէջ: Նա «սրտարեկեալ, միջակոտոր» անձար մի գերի է և ոչ մի բանի վերայ ուրախութիւն չի զգում:

«Եթէ գրբուլն ու զումրին

Բերեն ինձ երգասաց զուսան, չուրախանամ:

Եթէ հազար գոյնզգոյն փետուրներ

Ինձ բերեն խալաթ տան, չուրախանամ:

Եթէ զշաքարն ի Մաղաճու

Բերեն ինձ կերակուր տան, չուրախանամ:

Եթէ զարպաս ինձ շինեն ոսկւով,

Չարդարած անգին մարգարտով, չուրախանամ:»

Իսկ եթէ այդ հաւուկն հնար ունենար խառնուելու իւր երամի մէջ, այն ժամանակ միայն կուրախանար:

Եթէ լինէր որ [Թռչի) բարձրանայի,

Տեսնի զիմ երամս, խաղալով, ճախրելով,

Ու կարկաչելով խառնել յիմ երամս,

Յայնժամ ուրախանայր սիրտ բաժանելոյս:»

Այդ բնական մաքուր զգացմունքը, որ յայտնած է ժողովրդական երգի մէջ, ամէն մի անհատի սրտին յատուկ է և հաճելի՝ ինչ զասակարգի և

ինչ աստիճանի ու կարողութեան մարդ կուզէ լինի. հայրենիքին, իւր բնական հողին ու ջրին, իւր ընտասուն երկիրներին ու հարեաններին կարօտել և անձկալ գիտէ ամէն ոք այն ժամանակ, երբ հեռու է և զուրկ է նոցա տեսութիւնից. այսպիսի ժամանակ ուսումնականը, վաճառականը, արհեստաւորը, աղքատը, հարուստը, ծառան, իշխանը՝ ամէնքը ամէնքը կարծես նմանում են այն երեխային, որ վաղուց արգէն աչք է ածում իւր մօրը տեսնելու և ի վերջոյ յուսահատութիւնից լաց է լինում. բնական է այդ թախիժը, որ այնքան աւելի զօրեղ է լինում, որքան աւելի դժուար է կարօտն յագեցնել: Գեղեցիկ է արտայայտել այդ վիճակը Պառակօնիսցի աշուղ Բուչակ Մահապետը ժ.Չ. գարում*:

Ժամ ժամ զիմ զարիպութիւնս յետ յիշեմ
ու նստեմ ու լամ:

Ճապղեր եմ ջրի նման, ի յօտար երկիր կու
գնամ:

Յորեկն եմ նետի նման, զով տեսնում ի դէմ
կու գնամ:

Գիշերն աղեղան նման, ես լարթափ ի վար
կու մնամ:»

Կանգ առնելով Մազաշի երկու երգի վերայ, որոնք համեմատաբար միւսներից հին են, մենք տես-

* Նոր ժողովածու, Ա. պրակ, երես 76:

Նու՛մ ենք նոյն ժողովրդական ոգին և ձևերը. պան-
զիստին օրինակ է բերուած այն թռչունը, որ իւր
երամից բաժանուած « մոլորած » ոչ մի անդ հան-
գիստ չունի. « այնչափ երերուն կենայ, մինչ որ իւր
երամն հասնի. » պանզիստի « սիրտը սև է քան
զգործելի. » « ի զարիպութեան դարդէն երեսի գոյնն
կու քաղի. » մարդիկներ ընկերութեան մէջ օտար
երկրում զարիպն իրեն միշտ մէնակ է զգում.

« Յորժամ ի մէջլիս նստի
Յանկակած սրտիկն արունի,
Չաչերն ի բոլորն ածէ,
Կարևոր և զոք նա չունի. »

Օտար երկրում նորան ոչ ոք չէ ճանաչում մինչև
անգամ եթէ նա երևելի մարդու որդի լինէր.

« Որ թէ լինի պարոնորդի և աննման,
Հանած վարած ասեն նմա մոլորական. »

Մորա աչքին ամէն բան վատ է երևում այնտեղ.
ամէն ինչ դառն և անախորժ.

Ղարիպի հացն է լեզի որ ճաշակէ,
Դառն ու լեզի խառն արտասուօք
Չուրն որ ըմպէ.

Թէ զօրն տան նուշ ու շէքէր որ ճաշակէ,
Մըք հառաչէ, նա ի սրտէն արուն կաթէ. »

Իսկ երբ նա կարօտ լինի մարդիկներ ի կարեկցու-
թեան և բաղխէ օտարներ զուռը, զրէթէ ամէն
տեղ նորան յետ են մղում իրենցից.

«Ղարիպին վայն է եկեր, երբ քաղցենայր.
 Երես ի քաշ ի փողոցերն կու մուրար.
 Շատ ոք փակէր զդուռն ի դիմաց.
 Կատէր ու լայր»

Թէ կաթ մի ջուր ուզէր դերին, մէկ մի շտայր»
 շատ տեղ զթութեան հետ միասին մարդիկ զարի-
 պին անարգանք են հասցնում որ աւելի ևս դառ-
 նացնում է նորա վիճակը.

«Շատոց սեղան լինէր դրած հազար բարով,
 Եւ գայր զարիպն մտանէր ամաչելով.
 Նա հազար գէշ ասին նմա անարգելով
 Ապա թէ տան կտոր մի հաց տրանջալով»

բայց թշուառութեան այս տեսարանները դեռ ոչինչ
 են այն սրտաձմիկ վիճակի առջև, որ պատկերա-
 ցնում է Նաղաշ, պանդուխտների հիւանդութեան
 և մահուան գէպքերն յիշելով: Հիւանդ զարիպն
 «յօտար փողոց մոխրաթաւալ անկեալ կենայր, թէ-
 պէտ ունէր շատ սիրելիք, մէկ մի չկայր»

«Ոչ բարձ զլսոյն կար զարիպին, ոչ անկողին-
 Սալն սնարք է, և աւազ իւրն անկողին»

Այդ անտիրութեան և միայնութեան մէջ՝ Աստուած
 հոգէվարքի տագնապի ժամանակ մի քահանայ է
 հասցնում՝ զարիպին յետին թոշակը տալու. բայց
 հիւանդը նոյն միայնութեանն է վիճակուած. և երբ
 մահու հրեշտակը վերջ է դնում նորա երկրաւոր
 տանջանքներին,

«Նա կայր անկեալ մէջ փողոցին անտիրական,
Մէկ մի չեկաւ տես զարիպին, ոչ լալական,
Մէկ մի չկայր զձեռն խաչէր վրայ սրտին»

և կարծես այս սրտածմլիկ տեսարանն ևս առաւել
անտանելի կացուցանելու համար մարդիկ

«Ծիծաղելով առին տարան յեզր հողին,
Մէկ մի չեկաւ անդ ի թաղումն զարիպին»

Աղքատ և անտէր պանդուխտների վիճակի այս
թշուառութիւնն, անշուշտ, անձամբ տեսել և հաս-
կացել է Մկրտիչ Նազաշ այն երկար ճանապարհոր-
դութեան ժամանակ, որ կատարեց Ամիգից Կ. Պո-
լիս, այնտեղից Կաֆայ, և այստեղից դարձեալ Ա-
միգ: Նորա ուղեգիծը, որն էլ լինէր, գանուում էր
այնպիսի երկրների մէջ, որտեղ ցրուած տարած-
ուած էին ամէն կարգի Հայեր իրենց բնազաւառից
դուրս օտարութեան մէջ բազդ որոնելու համար:
Անձամբ տեսած և փորձած լինելով զարիպութեան
վիճակը, Նազաշ իւր ողբի մէջ զրել է իրականու-
թեան պատկերն, և ասում է.

«Նազաշն ասաց թէ զարիպին կեանքն է հարամ,
Զզարիպի հալն գիտեմ, որ վայ կուտամ:
Թէպէտ տեսայ զամէն մարդոց լուծֆ ու
քարամ:

Զզարիպութիւնն յորժամ յիշեմ քան զուռ
գողամ:»

Միևնոյն ժամանակ իբրև մտիթարիչ իւր ժողովրդ-

զի՛ն Մաղաշ միշտ յորդորում է զարիպին համբերող
լինել, չյուսահատուել, սիրաբ լայն պահել և յու-
սալ որ Աստուած կը յաջողէ նորան վերագառնալ
տունն.

«Ղարիպ, սիրադ մի՛ նեղեր»

Այս դիժար օրերս անցնի.

Շատ զարիպ ի տուն դարձաւ,

Մի՛ վախիր թէ քեզ չի լինի»

Յորդորում է ամէնքին քաղցր վարուել զարիպի
հետ, ողորմած և մարդասէր լինել. աղօթում է,
որ ամէն զարիպ բարով հասնի իւր մուրատին, և
ի վերջոյ նոցա մխիթարութեան համար, որոնց դար-
ձը կարելի եղած չէ, Մաղաշ իբրև վարդապետ եկե-
ղեցոյ և իբրև ճշմարիտ հաւատացեալ ասում է.

«Ամէնքս եմք զարիպ, եղբայրք»

Հայրենի մարդ իսկի չունի.

Հաւասար գնալու եմք»

Զի այն կեանքն է մեզ հայրենի.

Աստէնս քեզ ճարակ արան»

Որ յանտէնն հոգիտ չի տանջի.

Զսուրբքն ի քեզ եղբայր շինէ,

Ու զհրեշտակք արան սիրելի»

Մաղաշի միւս երգերի մէջ՝ ուշադրութեան
արժանի են երկու այլարանութիւնները, որոնցից
մէկը մի պարզ տաղաչափական արամախօսութիւն
է վարդի և սոխակի իսկ երկրորդը մի այլարանա-

կան ներքող է մարգարէներին, Բրիտոսին և Լուսաւորչին նուիրած: Մեր կարծիքով առաջին այլաբանութեան վերնագիրը «Գարրիէլ և Մարիամ» ոչ մի կապ չունի հրեշտակների և Ս. Աստուածածնի հետ* . երգի բովանդակութիւնը սովորական է միջնադարեան սիրոյ տաղերին. և եթէ համեմատելու լինինք ՓՆ. զարից յետոյ յօրինուած նման տաղերի հետ, կրտսնենք, որ նոյն իսկ բարբառն էլ յատուկ է այդպիսի տաղերին. երգը լի է պարսիկ և արաբացի բառերով ու զարձուածներով: Յովհաննէս Թլիւրանցին և Գրիգորիս Աղթամարցին աւելի շատ են գրել այդպիսի տաղեր, որոնց անշուշտ ծանօթ է եղել և Մաղաշի սոյն երգը: Աւելի նշանաւոր է երկրորդ երգը. այստեղ Մկրտիչ Մաղաշ կարծես թէ ուղեցել է նմանել Ս. Գրիգոր Մարեկացուն և օգտուել նորա «Գոհար վարդն վառ առեալ» և «Սոյլն այն իջանէր.» տաղերի ձևից ու բովանդակութիւնից: Նա գովում է ծաղիկներին. ինչ որ գեղեցիկ ծաղիկներ կային, ասում է, բոլորն էլ գնացին. մի ծաղիկ էլ այնպէս գնաց, որ բոլոր

* Այսպիսի մի տրամախօտութիւն ունի Առաքել (Բաղիշեցիէն քէ Սիւնեցիէն), որ շոյս տեսած է Հայերգի մէջ եր. 105. նոյնը հրատարակուած է 1865 Բագուավիպի մէջ, վերնագիրն է «Երգ ի Ս. Աստուածածիկն եւ ի Գարրիէլ հրեշտակապետն օրինակալ ի վարդն եւ ի պղպուղն.» այդ երգը մեր նեփական տաղարանի մէջ (1695 թ.) այսպիսի վերնագիր ունի. «Տաղ Առաքելալ վարդապետի սասցեալ:»

Ճաղիկները ողբացին. և բացատրում է սյլաբանութիւնն այսպէս.

«Ժաղկունք մարգարէքն էին,
Նահապետք և սուրբք առաջին
Ճաղիկն որ յեա նոցին,
Այն Յիսուս էր Հօր Միածին».

սյլաբանօրէն գովելով Յիսուս ճաղիկն, Նաղաշ-
յայտնում է, որ ամէն ճաղիկ խոնարհում էր նորա
առաջ.

«Ժաղկունքն յայն ճաղկի սիրուն
Շաղ առին ու շողողացին.
Ամէն ճաղիկն իւր գունդն
Այն ճաղիկն գլուխ դնէին».

ապա յիշում է վերջին ճաղիկն, որ Բրիստոսի տեղ-
բացուեցաւ. այդ «ճաղիկն էր մեր Լուսաւորիչն-
շառաւիղ սուրբն Թաղէոսին» Մկրտիչ Նաղաշ, որ
իւր դարու աւանդապահ շրջանի ոգևորեալ ներ-
կայացուցիչներէց մէկն էր՝ իւր Լուսաւորչի հա-
մար այսպիսի մի պարզ իզձ է յայտնում, որ մօտիկ
է և մեր սրտին.

Ժաղիկն Բրիստոս պահէ
Չայն ճաղիկն ի յոսս խաչին.

արդեօք այս մի ջերմ մտղթանք չէ Նաղաշի կող-
մից՝ տեսնել իւր մայրենի եկեղեցին անխախտ իւր
նախնական աւանդութիւնների վերայ՝ հակառակ

այն ձգտումներն, որոնց նպատակն էր հանել այդ եկեղեցին իւր գիրքից՝ այն ժամանակի հռովմէական իշխանութեանն ստրկացնելու համար* :

Մաղաշի երգերի բարբառն իւր յայտնած զգացմունքներն նման կենդանի է. թէպէտև նա վարժ էր գրոց բարբառին, բայց իւր երգերն յօրինել է, կարելի է ասել, միջնադարեան ռամկօրէնով: Մորա երգերի ուսումնասիրութիւնը բարբառի կողմից էլ

* Բացի այն օրերից, որ մենք նշանակել ենք ցանկի մէջ, Մկրտիչ Նաղաշի անունով ծանօթ ուրիշ օրեր էլ կան, որոնք սակայն մենք չենք չենք: Այսպէս Հ. Տաշեանի ընդարձակ ցուցակի մէջ յիշուած կան երկու օր. առաջինն 1690 ին գրուած Մաշտցի եւ Տաղարակի մէջ (№ 200) . Տ ա ղ ղ ա ռ ի պ ի ի ն ա ղ ա շ ե պ ի ս կ ո պ ո ս կ : Աստուծոյ մարդասիրին փառք յարեան, որ բարեգործ է զարարածս զանազան. երկրորդն 1705—14 րուերին գրուած Համաբաժնի մէջ (№ 263) «ի ն ա ղ ա շ ե պ ի ս կ ո պ ո ս կ ս ս ա զ ե ա շ : Ի՞նչ շան է քեզ գուր դասելն, երբ յօսար երկիր սի սանին, քե շաս եւ քե քիչ շանաս, քեզ միայն պատանք է բաժին.» այս վերջինը 18 երկնորդան է: (Տե՛ս Յուզակ Հայ. ձեռ. մասեւեաղ. Մխիթ. ի Վ. Ի. Կեկեւ, եր. 521, 813, 854, 869, 677 եւ 1001): Նոյն ցուցակի մէջ Հ. Տաշեան յայտնում է, որ Մկրտիչ Նաղաշ ունի բազմաթիւ զանազան, որոնց բարբառի վերեւագիրն եւ սկզբնական տղերք նշանակուած են իւրաքանչիւր տեղում. (տե՛ս եր. 424, 435, 312, 313 եւ այլն) . այդ զանազանի հաւար Մեծարգոյ ցուցակագրողը, որքան կարողացանք հետեւել, ոչ մի տեղ ցուցումն չի տալիս, քե ինչից է երևում, որ նոքա Մկրտիչ Նաղաշի յօրեւածն են. այն տեղակառնները, քե բարբառի սկզբնաստեղծն յօղում են «Մկրտիչ» անունն բառական չափսի համարուի այդպիսի բան մտածելու: Մեր սեփական գրեւայ

շատ հետաքրքիր է. նոցա մէջ կրգտնենք շատ նոր բառեր, գաւառական ոճեր ու զարձուածներ, հարեան օտար ցեղերի բառեր, քերականական ձևեր, աամկօրէնի նկատմամբ և այլ շատ պիտանի նիւթեր, որոնց մասին մենք կը խօսենք ու ըիշ ժամանակ: Այստեղ կարևոր ենք համարում յիշել միայն մեր ընդհանուր տպաւորութիւնը, որ Նաղաշի երգերի

ստորանի մէջ այդպիսի գանձեր կան Մկրտի յօրեւած, սակայն ոչ մէկի մէջ չի երևում այն ոճը, որ Նաղաշի սևունով հաստատու յայտնի ստղերի մէջ նկատու է եւս. նոյն իսկ գրաբարը, որ այդ գանձերի մէջ տեսնու է եւս, Նաղաշի ոճին հարմարատեսիւն է: Միևնոյն ժամանակ դիտելու է այն, որ Հ. Տաշեանի ցուցակի մէջ 1662 թուին գրուած մի ստորանու է կայ «Գանձ Ս. Յարութեան Քրիստոսի Մկրտի վարդապետի ասացալ, Մարդասիրութեամբ Ռոդոյ միամիտ եւայն», սկզբնաստերը «Մկրտի», եւ նոյն ստորանի մէջ կայ «Տաղ ի վերայ մեռելի. Արարիչն արարածոց մեզ բարկացաւ» որի երգիչն, ինչպէս մեզ յայտնի է նոյն իսկ այդ-ստղից, ինքն իրեն սևունուում է նախաջ եպիսկոպոս. (տես Յուզակ եր. 312 եւ 313): Արդե՞մք նշանակած գանձերն ինչպէս են համարուում Նաղաշիեր՝ կարծիքով քի գրչի ցուցմամբ: Օրինակի համար մեր կողմից առկարդ չեմք համարում դեռ այստեղ մի գանձ՝ Մկրտի յօրեւած՝ տեսնելու քի որքան հեռու են իրարոց Նաղաշի ստղերն եւ այդպիսի գանձերը.

Գ.ԱՆՁ Ս. ՍՈՒՔԻԱՍԵԱՆՅՆ.

Մեծապայծառ տօնիւս ըզձալի ուրախացան մանկունք
Սիրովնի.
Տօնախմբեն զօր յիշատակի քաջ նահատակացն վեհաս-
գունի.

բարբառի մէջ միանմանութիւն չկայ. ոմանք, կարծես, այլ մարդու յօրինած են, այնքան տարբերում են միւսներէից: Այս երևոյթի պատճառը մեր կարծիքով այն է, որ այն ժամանակի գրագէտ մարդիկ միշտ գրոց բարբառով էին գրում և նոցա համար ռամկօրէնը գրութեան մէջ շատ անսովոր դործ էր. ռամկօրէնով կամ հասարակաց հասկանալի բարբառով գրելը նոցա համար այնպէս դժուար պէտք է լինէր, ինչպէս մեր ժամանակի շատ մար-

Մեծ վկային սուրբ Սուքիասի և ընկերացն իւր համա-
գասին:

Որք յԱլանաց յազգէն գովելի ընդ Թագուհւոյն եկեալ
Սաթենկի:

Անդ պատուաւորք էին ազն ելի (̇), և աստ գտին
պարգևք ըղձալի:

Անդ սպասաւորք էին արքային, և աստ եղեն վկայք
Քրիստոսի:

Անդ մեծատունք էին ըստ աւերի (̇), աստ ընկալան
պսակ պանծալի:

Բարեխօսութեամբ սրբոյն Սուքիասի խնայեա՛ ի մեզ
Փրկիչ աշխարհի աղաչեմք:

Վենաց խորհուրդն բացայայտեալ, ի Քրիստոսէ աւետա-
րանեալ:

Զոր Թագէոս առաքեալն ընտրեալ ի Հայաստան աշ-
խարհ քարոզեալ:

Զսուրբ Ոսկեանքն իւր աշակերտեալ, կենաց բանիւ
հաղորդս արարեալ:

զիկների համար, որ քաջ դրագէտ են, գրաբառ
գրելը: Մկրտիչ Մաղաշի նկատմամբ այս հանգա-
մանքից զատ մի այլ բան էլ պէտք է աչքի առաջ
ուեննալ: Մա ծննդեամբ Բաղիշու մի գիւղից էր,
որ ունի իւր գաւառական բարբառը՝ մինչև սարկա-
ւազութիւնն, եթէ ոչ աւելի, նա մնացել է նոյն
տեղում, ուրեմն նորա համար գործածական ռամ-
կօրէնը Բաղիշու բարբառն էր. ապա մենք տես-
նում ենք նորան գրէթէ քառասուն տարի շարու-

Նորա ի սուրբ Հոգւոյն զօրացեալ առ թագաւորն Արտ-
շիր եկեալ.

Ջարբայութիւնն աւետարեալ (Շ.) և զՔրիստոս Աս-
տուած քարոզեալ.

Իսկ ազգականք թագուհւոյն եկեալ, որ Սուքիաս անուն
կոչեցեալ.

Չմեծութիւնն իւր արհամարեալ և արքայութեան երկ-
նից ցանկացեալ,

Չարքունական պատիւն անգոսկեալ (Շ.) և զճգնու-
թիւն ի յանձն իւր առեալ.

Բարեխօսութեամբ սրբոյն Սուքիասի խնայեալ ի մեզ
Փրկիչ աշխարհի ազաշեմք,

և այսպէս շարունակուում է մինչև մնացեալ տառերն ա-
ւարտելը.

Ռենական սիրոյ անմահին փափագեցին գունդք Սուքիասին.

Տեսեալ բանսարկուին չարն և ատացեալ զնոսա ի սէր
անմահին վառեալ.

Ո ցնծութեան աւուրն լրման եկեղեցւոյ մանկունք զուար-
ճանան.

նակ՝ 1430 - 1470 թուականներին՝ Ամրայ առաջ-
նորդական վիճակում, ուր բացի բազմամարդ և բազ-
մացեղ Ամիգ քաղաքից կային Արդնի, Մէրտին և
այլ քաղաքներ և շատ գիւղեր՝ Միջագետքի զա-
նազան ազգութիւններից բաղկացած, որոնց մէջ Հա-
յերն էլ միանման բարբառ չունէին, այլ իբրև զա-
նազան գաւառներից եկած զաղթականներ, անշուշտ,
բազմաբարբառ էին: Եթէ Մկրտիչ Նտղաշ իւր եր-
գերն յօրինել է զանազան ժամանակ, ինչպէս կա-
րող ենք կարծել մի քանիսի համար, և եթէ այդ

Չորեքկերպեան աթոռ լուսատու պայծառացան ի Հոգւոյն

սրբոյ.

Այսպէս են կազմուած գրեթէ՝ Մկրտչի բոլոր գանձերը,
մինչև անգամ բառերն էլ չեն փոխուում աների սկզբում:
Այդ գանձը հանեցինք մեր սեփական գրչեայ տաղարա-
նից, որ թէև թուական չունի, բայց հաւանական է, որ
Ժ.Ն. գարումն է գրուած. այդպէս կարծում ենք նոյն
գանձի այս խօսքերից, որ վերջին տան մէջ կան.


« Զհայրասպես մեր Կրակոս առաքինու թեամբ զնա զարգացո՛ւ »
այս խօսքերից երևում է, որ գանձի յօրինման ժամանակ
Հայոց կաթողիկոսը, որին յիշում էին եկեղեցիներում,
Կիրակոս Արարկեցի էր, որ ընտրուեցաւ 1441 թուին.
մեզ այնպէս է թւում, որ այդ իսկ գանձի յօրինող Թո-
մայ Մեծոփեցու ընկեր Մկրտիչ վարդապետն է, որ նոյն-
պէս Մեծոփայ վանքից էր և մասնակից եղաւ կաթողի-
կոսի ընտրութեան ժողովին, թէև Թոմայ յիշում է և
մի այլ համանուն վարդապետի այն է Մկրտիչ վ. Բագ-
րանու. (տես Թոմ. Մեծ. Յիշատ. երևս 52.)

միջոցին միշտ աչքի առաջ է ունեցել այն բազմութիւնը, որ իւր վիճակումն էր և որի հետ նա, անշուշտ, իւր կենդանի խօսքովն էլ շատ էր խօսում իբրև առաջնորդ և քարոզիչ, ապա ուրեմն մեզ հասկանալի կը լինի այն բազմակերպութիւնը, որ նկատելի է նորա բարբառի մէջ: Իսկապէս Մաղաշի երգերի բարբառը մեզ համար մի լաւ աղբիւր է հին գաւառականների ուսումնասիրութեան մասով* : Յանկալի է, որ նախ նորա այլ՝ տակաւին անծանօթ մնացած՝ երգերը լոյս տեսնէին և երկրորդ՝ տարբեր ընթերցումներն ու գրչութիւնները հրա-

* Նաղաշի գործածութեան մէջ կայ հետ և խն, խոս (հոտ), խալալ (հալալ), հսնց, հայնց (հէնց), հսնցեղ և վսնց, աշոտ (այգժ), աշոկից (յայգմանէ), յսնկից (անտի), յսնկ (յինէն), աւսկն, սնկեկ հոլովում է աւսկնիս, յաւսկնէս, սնսկնիկ և լն. ի հոս, ի հոն, պիտի և փ (վերջինս յաճախ), դարպասի, հարեղանի, ի հեղհակնոյն, արեկ, երեկ, փոխաւ, բացուաւ, և լն. ունի գործածներ «է՛ պորի լուսին», մանուկ մորուզալի—մանուկ մատաղատունկ, աղկ մանուկ, կանանկ արեւ, աղուտ պսկիւր, արեւմտակ, ծովային այլ, հետ բափիս ու հետ շուտիս դու նոր կու նորէս, որորմուկ—որորմիկ, վա՛յ հագար քերակ և լն. կան և խօսքեր, որ թէև հին են, այժմ էլ նոյն կերպ են գործ գրում, ինչպէս ընան (բաներն ի լման, կայ ի լման), յերեմակի, շսոց (շատերին), շսոց (շատունց), սոս ու փոս—սոս ու փուլ. սնքակ խօսքը սնգործ է նշանակում, սիրում է նուազականը օրիկ մի, արիկ, գործելի իբրև սծոյս կարծեմ, հնա-գոյն գործածութիւնն է Նաղաշի մօտ.

պարակ գայլին հաստատելու այն միտքը՝ թէ Մաղաշի երգերի մեծ մասի բարբառը Միջագետքի առաւելագէս Ամիգ քաղաքի ժԾ. դարու Հայոց գաւառականի գրոշմն է կրում իւր վերայ:

Առ այժմ այսքան: Յոյս ունինք, որ ժամանակը կ'օգնէ մեզ՝ մի օր վերագառնալու Մաղաշի կեանքի և գործունէութեան նոր ուսումնասիրութեանը, աւելի ճոխ և պարզուած նիւթեր ունենալով ձեռքի տակ քան այն աղքատիկ ատաղձը, որ այս շատ համեստ և սահմանափակ ուսումնասիրութեան նիւթ եղաւ: ԺԾ. դարը դեռ այնքան անծանօթ է Հայոց գրականութեան մէջ, նիւթերը դեռ այնքան անմշակ և, կարելի է ասել, անյայտ են, վերջագէս նոյն իսկ Մաղաշի նման աչքի ընկնող պատմական անձինքների պատկերը դեռ այնքան աղօտ է տեսնու՞մ պատմագրութեան հորիզոնի վերայ, որ ամենայն մի էջ, ամենայն մի տող այն դարի մասին հրապարակ հանելք մեծ նպաստ է գործի յաջողութեան համար: Երեսնից և սպասենք, որ գրչեայ մատեանների մէջ պահուած գանձերից հետզհետէ հանդէս բերուին կարևոր նիւթերն և հնարաւոր լինի բանասիրութեանն աւելի ճոխ տեղեկութիւններ տալ ապագաներին Մաղաշի գրական գործունէութեան և կեանքի մասին:



Բ.

ՆԱԴԱՇԻ ՏԱՂԵՐԸ.

1. Ունայնութիւն աշխարհիս «Երազ է սուտ, եղբարք»
2. Վասն մահուան «Անցանէ մեծութիւն»
3. Ողբ վասն մեռելի «Արարիչն արարածոց»
4. Վասն ազահութեան «Սողոմոն մայրն իմաստութեան»
5. Խրատ խռով չկենալու «Այ անձն իմ, վայ քեզ»
6. Խրատ և կշտամբանք անձին «Այ անձն իմ, աղօթէ՛»
7. Քաբրիէլ և Մարիամ «Բլբուլն ի վարդն սոսաց»
8. Տաղ ի գէմս մարգարէիցն և Քրիստոսի և Լուսաւորչի «Զինչ սր գեղեցիկ ծաղկունք»
9. Տաղ հարսանեաց և ուրախութեան «Նախ օրհնեմք»
10. Տաղ ուրախութեան «Նստէ՛ք ի մէջիս»
11. Վասն զարիպի «Հոգի՛ մի՛ ասեր զարիպ»
12. Վասն զարիպի «Ղարիպին կեանքն է լեզի»



INDEX

1. The first part of the book is devoted to a general introduction to the subject of the history of the world.
2. The second part of the book is devoted to a detailed account of the history of the world from the beginning of the world to the present time.
3. The third part of the book is devoted to a detailed account of the history of the world from the present time to the future.
4. The fourth part of the book is devoted to a detailed account of the history of the world from the future to the end of the world.
5. The fifth part of the book is devoted to a detailed account of the history of the world from the end of the world to the beginning of the world.
6. The sixth part of the book is devoted to a detailed account of the history of the world from the beginning of the world to the end of the world.
7. The seventh part of the book is devoted to a detailed account of the history of the world from the end of the world to the beginning of the world.
8. The eighth part of the book is devoted to a detailed account of the history of the world from the beginning of the world to the end of the world.
9. The ninth part of the book is devoted to a detailed account of the history of the world from the end of the world to the beginning of the world.
10. The tenth part of the book is devoted to a detailed account of the history of the world from the beginning of the world to the end of the world.
11. The eleventh part of the book is devoted to a detailed account of the history of the world from the end of the world to the beginning of the world.
12. The twelfth part of the book is devoted to a detailed account of the history of the world from the beginning of the world to the end of the world.

1. ՈՒՆԱՅԵՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻՍ.

Երազ է սուտ, եղբարք, աշխարհիս բաներն ի լման.
Ո՞ր են թագաւորք, իշխանք, պարոնայք և սուլ-
թան ու խան.

Շինեցին բերդ ու քաղաք, դարպասնի, ու շա-
տացան¹,

Յետոյ գէմ անտէր թողին, ու մտան ի հող լ՛ ի
զնտան:

Նաղա՛շ, մի՛ խաբիր մեղօք, մի՛ դատիր անաս-
նոյ նման.

Մի՛ գիրկ աշխարհիս ածեր, մի՛ կարծեր, թէ
քեզ տի մնան.

Շուտով քեզ խնդիր կուզան², ու խոցին զհո-
գիդ մահուան.

Հոգիդ բաժանի ի քէն, ու մնայ մարմինդ ի
զնտան:

Աշխարհս գէմ պա՛խա չունի, ու չար է մարդ ու
բարի³,

Օրիկ⁴ մի խնդալ կուտայ, բայց յետոյ է դառն ու
լեղի.

Աշխարհիս մի՛ հաւատար, զօրն ի բուն գէմ սուտ
կուխօսի,

Զինչ որ խոստանայ մարդուն, չի պահել զիւր⁵
խօսքն ի տեղի:

Շատոց խոստանայ հանգիստ, ու պահէ զօրն
յերերմանի:

Շատոց մեծութիւն ասաց, ու պահէ աղքատ
և՛ անօթի:

Խաբէ թէ ուրախ պահեմ, ու առնեմ զօ-
րերդ ի բարի:

Ի միջոյ ծովուն⁶ տանի, ու պահէ ի տարտա-
րոսի:

Աւուրք մի վերայ անցնի, լուկ մահունն օրն հա-
սանի:

Յարևուն դատարկ հանէ և առնէ ողորմ՝ ու լալի:

Աւաղ զայն աղւոր մանկտիքն, որ դարձան ի հող
և՛ ի փոշի:

Իւրեանց ժամանակն անցաւ զերդ զերազ մուծն
գիշերի:

Երբ զայդ գիտէիր, գերի, որ քո սէրդ ի սուգ
տի փոխի,

Զաշխարհս դու մի՛ սիրեր առաւել քան զկարն
աւելի:

Մալի հասրատ մի՛ լինիր, մեծութիւնն քեզ
չի՞ պիտի⁷:

Ունիս կերակուր, հանդերձ, աւելին քեզ ցաւ
կու լինի:

Է՛ ողորմելի Յաղաչ, դու ջանա՞⁸ ու գործէ՛ բարի:

Զքո՞ զխրատն դու լսէ՛, որ այլոց ի գործ անցնի:

Գիտի, թէ լողորդ էի՞⁹, նա մեղաց գեան կու տանի:

Ի հոգս աշխարհիս դատի, շահ չունի քան զենն
աւելի¹⁰;

Ձեռ. 1695 ր.

ԾԱՆՕԹ. Սոյնը հրատարակել է և Հանդէս ամ-
սօրեայն 1896 (Թ. 2) առանց ցոյց տալու գրչեայ օրի-
նակի թուահանը. նշանաւոր տարբերութիւններն այս են.
1 շատ դատեցան. 2 կուգալ. 3 ոչ արեր է մարդոց բա-
րի. 4 աւուրք. 5 զիր. 6 ի մէջն ի ծովուն. 7 պիտիր.
8. ջանք արա. 9 գիտէիր թէ լողորդ էիր. 10 ի հոգ աշ-
խարհիս դատիս, շահ չունիս քան զենն աւելի:

2. ՎԱՍՆ ՄԱՀՈՒԱՆ.

Անցանէ մեծութիւն և փառք աշխարհիս.
Աւերի և քակտի շինուած տաճարիս.
Բայց դու զայս զխտացիր թէ յի՛նչ կու դատիս¹,
Երբ թողուս օտարաց և՛ ի հող մտանես:
Գիտացիր զխտացիր քեզ օր կայ մահու.
Գերեզման դու շինէ քեզ տուն կենալու².
Դու չունիս քեզ ճարակ³ աստէն մնալու⁴,
Դու վասն է՛ր դադարիս զաչերդ ի լալու.
Երբ չունիս դու ճարակ⁵ աստէն մնալու⁶,
Դու արա՛ քեզ ճարակ⁷ շուտով գնալու.
Զինչ ունիս աստէնիս, փոխ տո՛ւր Աստուծոյ.
Զիննհար, զիննհար անդ ես գնալու:
Ը՛ր դատիս, եղկելի՛, հեա անցաւորիս,
Երբ յետոյ փոշիման արտում աի լինիս⁸.

Ընդ հոգւոյդ ժրացիր⁹ և գործէ բարի.
Ընտրելոց հեռւիր զի սուրբ լինիցիս:
Թէ կամիս Աստուծոյ լինել սիրելի,
Թող զսէր աշխարհի և գործէ զբարի.
Ժամանակս է խաբող, քեզ չառնէ բարի:
Ժամ մի քաղցր, և յետոյ խիստ դառն ու լիզի:
Ի՞նչ շահ է քեզ խնդալ ի յայսմ աշխարհիս,
Երբ յետոյ մեռանիս¹⁰, և՛ ի հող մտանիս.
Լաց լալով եղկելի, թէ խելք ունիցիս,
Լաց և՛ իշէ՛, զի վաղիւն ի հող մուծանիս¹¹.
Խարեցար յաստենէս, քեզէն¹² վկայէ,
Խոցեցար չար նեախ և սատանայէ.
Ժիծաղիլ վայրապար քեզ ի՞նչ վայել է,
Երբ վաղիւն արտասուք ու լաց ժամանէ.
Կենաց զիր դու չունիս անմահ մնալու.
Ի՛ ոչ առեալ ես պատգամ աստէն կենալու¹³.
Հիւր եկիր աշխարհիս¹⁴ այլ ես գնալու.
Հայնց ջանս՝ որ չի լինիս բաժին կենալու¹⁵.
Չայն Փրկչին քարոզէ կենալ քեզ արթուն.
Եղկելի՛ դու վասն է՞ր կաս անհոգ ի քուն,
Ղեկավար նաւարեկ¹⁶ ես ի մէջ ծովուն,
Ալէկոծիս մեղօք զինչ նաւն ի քամուն¹⁷.
Ճանապարհ հեռաւոր ունիս գնալու.
Ճար չունիս, ճար չունիս փրկիլ ի մահու.
Մի՛ առներ դու խափան զաչերդ ի լալու.
Ջմիտքդ արթուն կա՛յ քննէ՛ թ՛ ուր ես գնալու.
Յորժամ մահ քեզ տիրէ և՛ օրն հասանի,

Եւ հոգիդ ի մարմնոյդ ելեալ բաժանի,
Նա Հայիս աստ և անդ ողորմ ու լալի,
Ոչ օգնէ քեզ եղբայր և ոչ սիրելի:
Շուրջ աճես ողորմուհ¹⁸ զաչերդ ու նայիս¹⁹.
Հետ թափես արտասուք ու հետ շուարես.
Ոչ օգնէ մեծութիւն է՝ ոչ սէր աշխարհիս,
Զինչ բարի գործեցեր նա զայն տի տանիս²⁰.
Զամուշես թէ վասն էր ի զուր կուգատիս,
Ո՛վ հասաւ մուրատի, որ դուն տի հասնիս²¹.
Պարծենաս ու պահ մի թապտիր դու չունիս,
Ո՛վ շահաւ աստենէս²², որ դու տի շահիս²⁵.
Զանք արա՛ աղօթից արթուն կենալու.
Բայ՛ զհոգւոյ աչքդ ու տես թէ ի՛նչ կայ գալու.
Որբրի՛ ես դու²⁴, թէպտիր արա՛ գնալու.
Գիտացիր, գիտացիր թէ չես մնալու.
Սուտ ու փուտ²³ մեծութիւնդ ու փառքդ անցանէ.
Ա՛յ Սաղա՛շ, մի՛ խարիր, զխելքդ ժողովէ²⁶.
Վարդապետ ձեանաս, զգործն կատարէ.
Վայ՛ անձինդ, երբ գատողն յատեան տի²⁷ կոչէ.
Տէր կոչիս, տուր համար գործոյն տիրական.
Տես թէ որչա՛փ²⁸ արեան ես դու պարտական.
Քարունի անուանիս վարուք ուամկական.
Վայ՛ աւուրն որ համար տաս տնեսութեան.
Յաւք հոգւոյդ ու²⁹ կրակ վասն էր յաւելես,
Ագահիս ու մեղաց պտուղ ժողովես.
Խիւն⁵⁰ դադար է մեղաց, դու նոր կունորես.
Զինչ տանուս⁵¹, օտարաց պիտի վճարես.

Փոխանակ որ առեր զկեղտ աշխարհիս
 Զինչ բարի գործեցիր, նա զայն տի տանիս.
 Քահանայ ես քաւիչ, վասն այն մեծարիս.
 Անքաւել մեղանչես, վասն այն կորնչիս⁵²:

Մի՛ դատիր, այ՛ Մաղաշ, ի զուր մի դատիր,
 Մի՛ խարիր, մի՛ խարիր, մեղօք մի՛ խարիր⁵³.
 Մի՛ մնար, մի՛ մնար անդարձ ի մեղաց,
 Մի՛ մտաներ, մի՛ մտաներ զհոգիդ տանջանաց.
 Ի թաղիլ մեռելոյ ճարակ քեզ արա՛ւ,
 Երբ նորա օրն եկաւ, քեզ այլ պետի գայ⁵⁴.
 Այ՛ Մաղաշ, դու լսէ՛, զինչ որ քարոզես,
 Ի՛նչ շահ է քեզ ասելդ, որ ոչ կատարես.
 Որչափ շատ մեծութիւն ու մայ ժողովես,
 Նա թողուս օտարաց է՛ ի հող մտանես:

ԾԱՆՈԹ. Սոյն երգի բնագիրն ինչ ինչ տարբերու-
 թեամբ գտնուում է 1617, 1627 և 1695 թուերին գըր-
 ուած օրինակների մէջ: Լոյս տեսած է Ներս. Գար. Հա-
 յեր. Չեռագր. ցուցակում 1893 թուին և Արարատի
 մէջ 1895 թուին: Տարբերութիւններն հետևեալներն են.
 1 թէ զինչ կուտանիս. 2 գերեզման տուն շինէ անդէն
 գնալու. 3 քաղաք.—ճար. 4 կենալու. 5 հրաման. 6 կե-
 նալու. 7 թատրիր. 8 կու լինիս. 9 միացիր. 10 փոշիման.
 11 լուծանիս. 12 քեզ այն. 15 մնալու. 14 այս աշխարհ.
 15 բաժին դու հրոյ. 16 նաւապետ. 17 լի աստէ ի ծո-
 վուն.—ալէկոծեալ. 18 ողորմիկ. 19 աչերդ ողորմի կու-
 նայիս. 20 կու տանիս. 21 հասանիս. 22 աստէնիս. 23 կու-
 շահիս. 24 ոայի ու. 25 փուչ. 26 ա՛ նաղաշ դու զխեղքդ
 ժողովէ. 27 չիք. 28 քանի. 29 ցաւք հոգւոյ դու. 30 խին

3. ՈՂԲ ՎԼԱՍՆ ՄՆԻՆԵԼԻ.

Արարիչն արարածոց մեզ բարկացաւ.

Քաղցր բնութիւն աստուածային¹ մեզ դառնացաւ.

Սուրն հրեղէն այսօր յերկիր² տարածեցաւ.

Հուրն ի տանէն աստուածային բորբոքեցաւ:

Նշուցէ քիչ քիչ վայ հազար բերան զինչ³ գործեցաւ.

Ձի նորասէր հարսն ու փեսայն⁴ բաժանեցաւ.

Քանի մանուկ մորուագալի⁵ ի հող դարձաւ,

Եւ թէ քանի մայր ի յորդուէ⁶ մորմոքեցաւ:

Անմեղ տղայքն ի հրեշտակէն խոցեալ լինին,

Եւ թաւալին առջև ծնողին⁷ ողորմագին.

Աղիողորմ ի մօր յերեսն⁸ նուաղին.

Որպէս ծաղիկ զարնանային թառամէին⁹:

Ամ ո՞վ¹⁰ կարէ լեզուաւ պատմել զբանն աղէտին¹¹,

Եւ զկսկիծն դառնութեան զողբս սրտին.

Ձի գեղեցիկ և ճոխ պատկերքն մեռանին,

Եւ սիրական որդիքն ի մօրէն բաժանին:

Լացէք այսօր և ողբայէք ամենեքեան.

Դառն արտասուօք հառաչեցէք դուք միտքան.

Ձի հանց կսկիծ այլ չէ տեսիլ մարդ բանական,

Որ սար ու ձոր և¹² ծառ ու ճեղ ամէն կուլան:

Աղէկ մանուկ աղւոր¹⁵ պատկեր արևնման.

1՝ հին. 51 առնուս. 52 անբաւելի մեղանշելով կորնչիս. 53 այս երկտողը 1627 թուի ձեռագրի մէջ կրկնուում է սիլըբից մինչև վերջը բոլոր երկտողից յետոյ. 54 հետևեալ քառատողը չկայ 1695 թուի ձեռագրի մէջ:

Յունքն կամար¹⁴, աչքն կանթեղ էր յանդիման.
Յամէն անձամբ և հասակօք ինքն¹⁵ տննման.

Ամէն մարդոց էր սիրելի և սիրական¹⁶;
Գեղեցիկ սարկաւազունք և քաղցրաձայն¹⁷,
Որ կարգային զօրհանապազ սաղմոսարան,
Որպէս ծաղիկ եկեղեցոյ վայելչական,
Այսօր մեռեալ և մտանէ ի նեղ զընտան:

Այսօր եհաս դառն հրաւէր և դատաստան.
Ծարակ չունէր յամէն դիհաց, ոչ օգնական.
Մահու հրեշտակն ահեղակերպ զարհուրական
Ոչ ողորմի փեսային և ոչ մանկան:

Մանուկ անկեալ և թաւալէր ողորմագին¹⁸,
Քանզի հասեալ էր օր մահու¹⁹ բուռն ատենին.
Հայեր ողորմ²⁰ յաջ և ի ձախ²¹, քակտեր հոգին,
Ծար չունէր, ոչ օգնական յայնմ ատենին²²:

Եայնժամ ելաց²³, լալով ասաց. ինձ խղճացէք.
Եւ զենէհար ի մահուանէն զիս թափեցէք²⁴.
Եւ ի ձեռաց սուրբ հրեշտակին ազատեցէք.

Ձի դեռ մանուկ եմ զենէհար²⁵, զիս զնեցէք²⁶;
Ինձ չէ ատեն, ոչ ժամանակ մեռանելոյ²⁷,
Ոչ նեղ զընտան և զերեզման մտանելոյ.

Ձի շատ հասրաթ ունիմ ու շատ բան հոգալոյ,
կամք չունիմ ես իմ տանէն ելանելոյ:

Մեռելն ելաց և հառաչեց²⁸, ճարակ չեղաւ.
Դառն արտասուօք դարձաւ²⁹ ի հայրն նայեցաւ.
Հայր զենէհար³⁰, հասի՛ր մէտէթ³¹, հոգիս քա-
կուաւ³²,

Հազար⁵⁵ հասրէթ կայր իմ սրտիս մէկ մի շեղաւ :
Հայրն⁵⁴ դարձաւ յորդին ասաց հառաչելով,
Թէ ճար չունիմ, ոսկի է՝ արծաթ քեզ գնելոյ⁵⁵.
Հոգիս կուտամ հոգւոյդ փոխան յօժար սրտով.
Չենէհար⁵⁶, զիս մի՛ խոցեր հրեղէն սրով:

Հայրն չկարէր փրկել զորդին իւր սիրական⁵⁷.
Որդին էլաց և հառաչեց, յոգւոց եհան.

Չաչերն էլից դառն արտասուօք ողորմական,
Ելաց զիրեն կանանչ արևն մանկութեան:

Գեղեցիկ գոյնն երեսաց թառամեցաւ.

Եւ⁵⁸ ճովային աչքն ի լուսոյ⁵⁹ պակասեցաւ.

Վայելուչ զօրեղ բազուկն թուլացաւ⁴⁰,

Լար արծաթոյ⁴¹ ոսկի մանեակն մանրեցաւ:

Լալով ասաց. բարով կացէք, հարք և եղբարք⁴².

Բարով կացէք, իմ սիրելիք, դուք հաւասար.

Այս ճանապարհս որ ես գնամ, դառն ու դրժար,

Չենէհար ինձ պատարագ դրէք պաշար:

Բարով կացէք, սուրբ քահանայք աստուածազան,

Սուրբ աղօթիք զիս յիշեցէք դուք միաբան,

Պատարագօք հաշտեցուցէք զԱստուածն Բան,

Որ զիմ հոգիս արքայութեան առնէ արժան:

Ես Նախաշ եպիսկոպոս ծառայ Կուսին

Աչօք տեսայ դառն կսկիծ ողորմազին.

Լալով լացի և ողբացի արտասուազին,

Դառն արտասուօք զողբս ասացի նոր մեռելին:

Ի Հայոց մեծ թվականի յինն հարիւրին

Եւ համառօտ այլ աւելի տասնևութին
Աչօք տեսայ զոյր և զհառաչն դառնազինս
ԶՄէրտին քաղաքն արար զամէնն լալազինս
Ամէնօրհնեալ կոյս Մարիամ Աստուածածինս,
Զենէհար մեր ննջեցեալքն ի քեզ անձինս,
Արժան արա՛ զսա օրհնութեամբ⁴⁵ սուրբ պը-
սակինս,
Եւ քեզ ամէնքս երկրպագեմք, Աստուածածինս:

ԾԱՆՕԹ. Այս ողբն օրինակուեցաւ 1645 թուի
ձեռագիր Մաշտոցից, համեմատուեցաւ 1601 և 1617 թ.
գրուած ձեռ. տաղարանի հետ: 1803 թուին Կ. Պօլիս
տպուած Մայր Մաշտոցի մէջ առաջին անգամ լոյս է
տեսել թերի, հրատարակուել է 1893 ին Ներս. Գպր.
ձեռ. ցուցակումս և 1896 ին Ամսօրեայ Հանդէսում: որի
մէջ հինգ տուն պակաս է: Տարբերութիւններն այս են.
1 չիք. 2 յերկնից. 3 ինչ. 4 նորապսակ հարսն ու փեսայն.
5 քանի մանուկ տղա մեռաւ.— մանուկ մատաղատունկ.
6 որդեմեռ. 7 յարջև ծնողաց. 8 աղիողորմ ի գիրկս
մօրն. 9 և թօթափին որպէս. 10 արդ ո՞վ. 11 այս և հե-
տևեալ երեք տողն չիք. 12 որ. 13 աղեկ. 14 յունքն
կարմիր. 15 բոլոր անձամբն և հասակաւ էր. 16 այս
տողն չիք. փոխարէնն « եղճեկ ու վայ իւր ծնողացն հա-
զար բերան ». 17 այս և հետևեալ եօթն տողն չիք.—
« Գեղեցկատիպ սարկաւազունք ». 18 մանուկն լայր և
հառաչէր ողորմազին. 19 մահուն. 20 չիք. 21 յահեակ.
22 սորա փոխարէն « եղճեկ ու վայ հազար բերան իւր
ծնողին ». 23 ելեալ. 24 այս տողն չիք. 25 զինահար.
26 սորան հետևում է « և ի յահէ սատանային փարա-
տեցէք. 27 այս և հետևեալ երեք տողն չիք. 28 հառա-

4. ՎԱՄՆ ԱԳԱՀՈՒԹԵԱՆ.

Սողոմոն մայրն իմաստութեան առ մեզ խօսի
քան խրատական¹,
Թ' որ յաւելու ի մեծութեան, նա ցաւք անձինն
բազմանան.
Հաւ է մի բուռն հանգստեան քան երկու բուռն
աշխատութեան.
Զոր առաքեալն վկայէ թէ կարևորն է բաւական.
Աշխարհս տունն է լի գանձով, փարթամութեամբ
և մեծութեամբ.
Այլ և սեղանն է բարելի, որ ամենայն ոք ցան-
կանան.
Որք իմաստուն են, հաւատով զչափաւորն առ-
նուն զնան.

չեաց. 29 դարձեալ, 50 զինհար, 51 միւրվէթ, 52 քակ-
տաւ, 55 և շատ, 54 հայրն, 55 քեզ գին տալով, 56 զի-
նհար դու, 57 այս և հետեւեալ երեք տողն չիք, փո-
խարէնն այն է,

«Յայնժամ եհաս ահեղ հրաման աստուածագիր.
Հրեշտակն եկեալ ի յԱրարչէն հոգւոյն խնդիր.
Զհոգին առեալ սուրբ հրեշտակին, ետ ձեռնագիր,
Եւ գեղեցիկ մարմինն ի հոգ դարձաւ յերկիր».

38 այն, 59 ի յուսոյն, 40 կապեցաւ, 41 լար արծաթոյն.
42 այս և հետեւեալ տողերը չկան, հետեւում է միայն մի
այսպիսի անհասկանալի տող, «յուժ ք ք թուականին և
և համարով ամբ», 45 անթառամ:

Որ վայելեն ի հանգստեան և հասանեն ի յօթ ևան-
Եւ որ անմիտն է չարափառ, ազահուլթեամբն
կուրանան,
Ի զիրկ ածեն անցաւորին և ի յալեաց մէջն ծփան:

Ի սկզբանէ մինչ ի վախճան ամէն վնաս² որ գոր-
ծեցան,
Ազահուլթիւնն եղև պատճառ, որ ի բարեացն զըր-
կեցան³.
Հայեանց և տես զնախնին Ադամ, որ ի դրախտին
աղենական⁴,
Աստուածային կերպարանօք պայծառանայր⁵ յա-
րենման,
Ազահուլթիւնն եղև պատճառ, որ ցանկացաւ աստ-
ուածութեան,
Վասն այն էանց զպատուիրան և մերկացաւ զպատ-
մուճան⁶:
Տես զնայէն եղբայրասպան թէ զինչ գործեաց որ
չէր արժան-
Նախանձեցաւ ազահուլթեամբ և զսիրասնունդ եղ-
բայրն եսպան,
Վասն այն անէծքն ժառանգեաց, զոր և Ղամէք
հարեալ եսպան,
Զեւթն պատիժն որ նա կրեաց, ամէնն վասն ազա-
հուլթեան,
Ո՛րպէս յաւուրս ջրհեղեղին ազահուլթեամբ պոռ-
նըկեցան:

Զրհեղեղաւ կործանեցան, ամէնն վասն ազահու-
թեան:
Հայեանց և տես զԿորիս և զԴադան, որ Մոփսիսի
ներհակ եղան,
Անդնդասոյց կործանեցան, ամէնն վասն ազահու-
թեան:
Հայեանց և տես զԱքար Զարմեան որ ի յաւուրս
Յեսու Նաւեան,
Որ էր իշխան երևելի, և չէր կարօտ նա մեծու-
թեան,
Գողացաւ նա ի յանիծիցն Երիքովի, որ չէր արժան,
Նա տուն և որդւովք քարկոծեցան, ամէնն վասն
ազահութեան:
Հայեանց և տես զՍաւուղ Կիսայն, որ յԱստուծոյ
էառ հրաման,
Խնդրել զվրէժ ժողովրդեան և սպանել զԱգակ ար-
քայն,
Ազահութեամբ նա կուրացաւ և մոռացաւ զՏեառն
հրաման,
Վասն այն կորոյս զմեծութիւնն և շար զիւացն
եղև դարան:
Գէեզի էր աշակերտն Եղիսէի խիստ սիրական,
Որ կուրացաւ ազահութեամբ և անիծիցն եղև
արժան.
Խարեաց պատրեաց զՆէեման, զարձաթն առեալ
ի թաքստեան,
Նա անիծիւք բորոտեցաւ, ամէնն վասն ազահութեան:

Այլև Յուդա Սկարիովտացին, որդի եղև նա կո-
րբստեան,
Զիւր վարդապետն ի մահ մատնեաց, յորմէ երկինք
է՛ երկիր գողան.
Ազահութեան ախան է գաժան, որ զաշակերտն ա-
բար գազան,
Զիւր վարդապետն ի խաչ եհան, ամէնն վասն ազա-
հութեան:
Հայեանց և տէս այժմ ի նորոյս զԱնանիա և զՍա-
փիրա,
Ոչ թէ յայլոցն գողացան այլ ի յիւրեանցն ազա-
հեցան,
Յա յԱստուծոյ պատիժ կրեցին և երկոքինն իսկոյն
մեռան,
Յղեն առակ նշաւակի. ամէնն վասն ազահութեան:

Ազահն չէ աստուածապաշտ ըստ Պաւղոսի վկա-
յութեան 7.
Ազահն զնոյն աստուած պաշտէ, որոյ ծառայ է
յարաժամ:
Ազահն գայլ է պատառոց և ծարաւի արեան
մարդկան,
Խլէ, զրկէ, յափշտակէ, ոչ յագենայ արեամբ
մարդկան.
Թէպէտ հարուստ է և փարթամ և տէր ընչից
և մեծութեան,

Բնութեամբն ազահ է և անյագ, ջանայ զրկել զա-
մենեսեանս.

Զի ոչ զխէ, ում ժողովէ, զերդ անասուն կայ
ի գատման.

Զի մնացեալ է զօր մահուն և ոչ յիշէ նա
զգատաստան.

Եւ որք կռուին և վշտանան, որք նախանձին և
գողանան.

Եւ որք խորհին չարիս մարդկան, ամէնն վասն
ազահութեան:

Որք հարկանեն և գողանան, սուա երգընուն և
ուրանան.

Բազումք ի հաւատոցն ելան, ամէնն վասն ազա-
հութեան:

Տեսայ զոմանս ի նեղ զընտան, և այլ բազումս
ի կախազան.

Զոմանս որ զխտովին կորեան, ամէնն վասն ազա-
հութեան:



Զինչ թագաւորք և մեծ իշխան, որ հեծելով
յիրար կռուան,

Զինչ որ արիւն յերկիր հեղան, ամէնն վասն
ազահութեան:

Զինչ որ քաղաք տապալեցան և ժողովուրդք
որ զերեցան⁸,

Զինչ որ աւերք առւթախտան, ամէնն վասն
ազահոլթեան:
Հարք ի յորդոց բաժանեցան, բուն սիրելիքն
քակտեցան,
Բազումք եղեն եղբայրասպան, ամէնն վասն
ազահոլթեան:
Կաթուղիկոսքն շատացան անօրինացն բռնու-
թեան⁹,
Եպիսկոպոս օրհնեն անբան, ամէնն վասն ազա-
հոլթեան:
Եպիսկոպոսք զկանօնն անցան, որ պռռնկաց
կուտան հրաման,
Կաշառ առնեն կարմիր զեկան, ամէնն վասն
ազահոլթեան:
Վարդապետերս որ նոր ելան, բանին եղեն վա-
ճառական,
Եւ քարոզեն զհաճոյս մարդկան, ամէնն վասն
ազահոլթեան:
Հարեղանին¹⁰ զվանքն ուրացան, և ի գիւղօ-
րայքն¹¹ ի շուրջ կուգան.
Սաղմոս ասելն մոռացան, ամէնն վասն ազա-
հոլթեան:
Երիցաներն յիրար կռուան, բիր վերուցին և
գաւազան¹².
Փետեն մորուս, կոտրեն բերան, ամէնն վասն
ազահոլթեան:

Գերի՛ Նազա՛շ ողորմելի՛, ի քեզ նայեաց դու յարա-
ժամ:

Զինչ որ այլոց քարոզեցիր, ամէնն ի քեզ կայ ի
լուման.

Մի՛ համարիր զազգս մարդկան քան զքեզ ելեալ¹⁵
ամբարտաւան.

Զինչ որ յաշխարհս կայ մեծութիւն, զամէնն ի քեզ
կամիս միայն¹⁴.

Վարդապետ կերպարանիս¹⁵, եպիսկոպոս գերաս-
տիճան,

Ունիս շնորհս զանազան, նա դեռ դու չես այդոր¹⁶
հաւան.

Աղուոր¹⁷ զմիաբը ժողովէ, որ այդկից¹⁸ այլ չենենս
ունայն.

Զնաւդ ի բեռանց¹⁹ թեթեւացո՛, որ հասանիս ի յօ-
թեւան:

ԾԱՆՕԹ. Օրինակուեցաւ 1659 թուին գրուած տաղարանից և համեմատուեցաւ 1695 ին գրածի հետ. վերջինիս մէջ մի քանի տուն պակաս է և վերնագիրն էլ այսպէս է. «Ի Մահուճ եպիսկոպոսէ ի Նազաշէ տաղ վասն ագահութեան»: Բնագիրը օրինակուած է 1659 թուին Վաֆայում: նորա վերնագիրն այսպէս է. «Նրատական բաներս վասն ագահութեան և անընչութեան ի Նազաշ վարդապետէ»: Նշանաւոր տարբերութիւններն այս են. 1 այս և հետևեալ 9 տողն չիք. 2 զինչ որ չարիք. 3 հետևեցան. 4 ի դրախտէ եդեմահան. 5 պայծառացեալ. 6 սորանից յետոյ «Եւ ի դրախտէն արտաքսեցան, ամէնն վասն ագահութեան»: 7 սոյն հետևեալ

5. ԽՐԱՏ ԽՌՌՎ ԶԿԵՆԱԼՈՒ ԵՒ ՈՒՍ ԶՊԱՇԵԼՈՒ.

Այ անձն իմ վայ քեզ հազար բերան թէ խռով
կենաս կամ ոխ պահես.

Զի խռովարարն է սատանայ, ջանա՛ որ սէրն հաս-
տատես.

Տես զի՛նչ արար Տէրն ի խաչին, որ խաչողացն
համբերեց.

Դու քո եղբօրն բարկանաս, ոչ ամաչես, ոչ պատ-
կառես.

Թէ Բրիստոսի աշակերտ ես, նա դու լսէ՛, զինչ
քարոզես.

Ապա լինիս մարդ կատարեալ, յորժամ առնես
և՛ ուսուցանես.

Յորժամ հանես զոխն ի սրտէդ և զատելին սրտով
սիրես,

Թէ մեղք ունիս լերանց նման, իսկ ի պահուն զա-
մէն քաւես:

Թէ ատելոյն բարի առնես և թողու թիւն մեղաց
խնդրես.

Յամէն մեղաց դու ազատիս, զարքայու թիւնն ժա-
ռանդես.

13 տողն չիք. 8 այս և հետևեալ տողն չիք. 9 այս և
հետևեալն չիք. 10 արեղանին. 11 դռնէ ի դուռ. 12 այս
և հետևեալն չիք. 13 եղաւ. 14 զամենայն քեզ կամիս
մնան. 15 չիք. 16 այտով. 17 աղէկ. 18 այտի. 19 նաւ
ի բեռինդ.

Թէ ի յտակս Կժոխոց ծանր մեղօք ընկղմեալ ես,
Թէ խոնարհիս քո ընկերին, յերկնից խորանն վեր
ելանես:

Թէ մէջ հրեղէն զեռոյն այրիս, զոր չար մեղօքն
բորբօքես:

Երբ շիջուցես զբարկութիւնդ, հրեղէն յերկինս
թեակոխես:

Թէ և զերեալ զքեզ սատանայ և ժանտ ախտից չար
ծառայ ես:

Որ թէ չարին բարի առնես, դու Բրիստոսի աշա-
կերտ ես:

Թէ Արարիչն է բարկացեր, վանց քո մեղացն, որ
դու գիտես:

Երբ հաշտենաս հետ ընկերիդ, զԱստուած ընդ քեզ
հաշտեցնես:

Թէ հաւատաս նա այս է դուռն արքայութեանն
որ մտանես:

Երբ զընկերիդ մեղքն թողուս, բարձր ի յերկինս
թեակոխես:

Թէ անհամար է անթիւ մեղօք զարքայութեան
դուռն փակես:

Երբ տիրապէս դու հաշտենաս, բանայ Բրիստոս,
որ մտանես:

Ապա քեզ վայ հազար բերան, թէ խոռվ կենաս
կամ ոխ պահես:

Բաժին չունիս ի Բրիստոսէ, քաւել գտունաս
է՛ ապաշխարես:

- Թէ աղօթիւք զերկինս բանաս, պահօք զերինս
փոփոխես,
Թէ ոխ պահես հետ ընկերիդ, ընդ կայենին պա-
տիժ կրես.
Թէ կուսութեամբ քո պարծենաս, որպէս հրեշ-
տակ զքեզ զիտես,
Թէ սիրտդ պեղծ է նախանձով, քան զսատանայ
ես, թէ զիտես.
Թէ և զօրէնս աստուածային լիով զամէնն կատա-
րես,
Թէ ոխակալ և խռովարար, իբր անօրէն անցա-
ւոր ես.
Թ՛ իմաստութեան աղբիւր ես դու, Արիստոտել
զքեզ զիտես,
Թէ շար կամիս քո ընկերիդ, անմիտ, դու քեզ
հօր կու փորես:

- Մախաչ, հազար վայ քո հոգւոյդ, որ անա-
մօթ ես՝ և՛ աներես.
Զքո Արարիչն ապտակեցին, դու մէկ խօսից
ոչ համբերես.
Զքո Տիրոջ կողն խոցեցին, զոր քաջ զիտես և
քարոզես.
Թան զքեզ այլ մարդ չկայ անամօթ, որ զայդ
զիտես, ոչ համբերես.
Յայնժամ լինիս դու քրիստոնեայ, յորժամ
խոցեն, նա համբերես.

Եւ Քրիստոսի սիրոյն համար զչարկամաց ոտքն
համբուրեսւ
Ձեռ. 1659 Թուակ.

6. ԽՐԱՏՔ ԵՆ ԿՇՏԱՄԲԱՆՔ ԱՆՉԻՆ.

Ա՛նձն իմ, արի՛ աղօթէ՛ դէմ Արարողին.
Արտասուօք պաղատէ՛ ի մէջ գիշերին.
Բարբառեալ բողոքէ՛ սուրբ Աստուածածնին,
Բարեխօս աննելով իւր սուրբ Միածնին.
Գոչելով գողէ՛ զայն, որ եկն ի խաչին.
Գունդք ամէն հրեշտակաց զնա գողէ՛ին.
Դատաստան դու յիշէ՛ և զօրն ահագին.
Դողալով սարսափէ՛ յահեղ ասանին:
Ե՛կ պատմեա՛, զինչ գործեր ես դու քահա-
նին,

Եզկելի՛, որ չայրիս ի հուր գեհենին.
Զղջացիր, զինչ մեղար, և սո՛ թողու՛ թիւն,
Զինչ յայս կեանքս ես լինի քեզ ողորմու-
թիւն.

Եթէ մեղք է տիրեր քեզ յասանուորիս,
Է ի հոս քեզ ճարակ, թէ խոստովանիս.
Ընդ աշխարհս ամ՝ քանի մեղօք զըմպողիս,
Ընդ հոգւոյդ միացիր ինչ որ մեռանիս:
Թագաւոր ես մարմնով ի յայսմ՝ աշխարհիս,
Թշնամոյն չլինի թէ յաղթահարիս.

Ժողովէ՛ զխեղք ու զվտըզ, յորժամ պաղատիս,
Ժամանակ մի թէ լսաս նա շատ ծիծաղիս.
Ո՛ր յերկրի նաւ շինէ՛ դու յայս ծովակիս,
Ո՛ր յերկինս ուղարկեա զինչ որ գանձ ունիս.
Լաւ ի հոս աշխատիս, և ի հոն հանգչիս,
Լաւ ի հոս մեռնիս, և ի հոն ապրիս.
Խաւարեալ աչք մտացոյ ի վեր չի նայիս.
Խափանեալ աչք հոգւոյս չէ արտասուալից.
Ժող մեղաց զիս պատեր ը՛ր ես եմ գումարեր.
Ժուլութեամբ ես զիմ կեանքս յաշխարհս ան-
ցուցեր.

Կամաւոր եմ գործեր, զինչ մեղք կայ, կուտել.
Կրակին եմ բազում խուլ ժողովել,
Հայրենիք ես ի հոն իսկի չեմ շիներ,
Հոգւոյս ե՛լ կու սսես, ուր եմ դադարեր,
Զիւն եկեր իմ սրտիս ու խիստ սառուցեր.
Չայն մահու եմ լսեր և անձորակեր.
Ղետական օրինացն իսկի չեմ լսեր,
Ղեբէոս առաքեալն եկեալ քարոզէր.
Ծար չունիմ ես յայս կեանքս յերկար կենալու,
Ծանապարհ չեմ շիներ անտէն գնալու.
Մարդ ամ յէ՛ր ես պարապ գու զօրն ի լալու,
Մի՛թէ չե՞ս աստենէն անտէն գնալու.
ԹԱրարչէն ակն ունիս դեսպան քեզ գալու,
Թահազին յատենին զի դքեդ տալու.
Նեղ է գուռն անտէնին, որ ես մտնելու.
Մշանաւ սուրբ խաչին ես անցանելու.

Շատ շալակ յայս կենացն ունիս տանելու.
Շարակիս ճար արա՛ ի հոս թողելու.
Որ զքեզ յօրինեց ի շորից նիւթոց,
Ողորմէ՛ւ՝ ի սրակդ բղխէ քեզ առու.
Զունիս գանձ յաշխարհիս որ տաս քո հոգւոյդ,
Զես ելներ աղօթեր ի մէջ գիշերոյդ.
Պաղատէ՛ արտասուօք ի յելս հոգւոյ,
Պահապան քեզ խնդրէ՛ ի սուրբ հրեշտակնոյն.
Ջերմեռանդ արտասուս դու բեր քո հոգւոյդ,
Ջանք արա՛ որ չայրիս ի հօւր գեհնոյդ.
Ռահ լուսոյ ջահ վառէ՛ ի յելս հոգւոյդ,
Ռամիկք են յաշխարհիս և ամէնն սուտ.
Սաղմոսիք օրհնութեամբ երգէ քո լեզուդ,
Սատանին չար հնարն չանէ քեզ մուտ.
Վերնական օրինաց լինիս դու հմուտ.
Վաղէն օրն ատենին գանուս քեզի մուտ.
Տունկ կղի՛ր յԱրարչէն հանց որ կանաչիս,
Տերևով զարդարիս և պտղաբերիս.
Բարունւոյն հրամանաւն յաշխարհս գտած ես,
Բենական լոյսն առնուս թէ՛ գինք ծանաչես.
Յօղելով արտասուօք լսպտեր յօրինես,
Յնձութեամբ զփեսայն մանուս տեսանես.
Էրբասերն Արրահամ էր աստուածատես,
Հիւանդաց է՛ օտարաց տեղ է՛ր ինայես.
Փառք առնուս յԱրարչէն, թէ՛ զայդ կատարես,
Փոխանակ այդ բարւոյն զկեանս ժառանգես.
Զեզ կրգեմք զօրհնութիւն զի դու միայն ես :

Բերովբէք քեզ երգեն յիմ Տէր փառք քեզ:

ԾԱՆՈԹ. Արտագրուեցաւ 1659 ին գրուած տաղարանից. վերնագիրն է «Խրատ և կշտամբանք անձին Նաղաշ վարդապետի ասացեալ»:



7. ԳԱՅՐԻՆԷԼ ԵՒ ՄԱՐԻԱՄ

Բլբուլն ի վարդն ասաց. Խիստ անողորմ ես,

Որ զիմ արուն քեզ խալալ կու գնես,

Որ հանց պէկու ման գու Գարրիէլն ես,

Սա արեկ առ զհոգիս քանի՞ օր տանջես:

Վարդն բլբուլին ասաց. Զիս յէր կու խոցես,

Դու զիմ հոգին առեր, հետ քեզ կու գրես.

Հասրաթ կայ յիմ սրտիս անշէջ կու վառի,

Որ զքեզ արժան գտայ ու թէզ կորուսի:

Բլբուլն ի վարդն ասաց. Հոգիս կու քաղուի:

Ու բաժանել ի քէն ինձ մահ կու թուի.

Զո շատ կարօտուդ սիրտս կու լափի,

Որ թէ շաքար տան ինձ զահր ու լեղի:

Վարդն ի բլբուլն ասաց. Այս ի՞նչ կու ըհահ է,

Զինչ դու խեղ ինձ արիր, կատարեալ մահ է.

Հանցեղ հուքմ ու հրաման քեզ ո՞վ տուել է,

Որ վարդն ի քո ձեռացդ գորի ու զար է:

Բլբուլն ի վարդն ասաց. Դու արիր ինձ չար.

Զար ու Ֆրզան կանչեմ յալամն հաւասար.

Իմ սիրտս հասրաթով հետ քեզ կուգողար,
Դու ոչ մրվաթ ունիս և ոչ զինահար:

Վարդն բլբուլին ասաց. Հազար զինէհար,
Դու մի լինիր յիսնէ շուտով բէզար.
Ահա ես քեզ Ֆրդէ իմ թամ ու զար,
Զարամ արա՛ քարամ է ահչէն ագար:

Բլբուլն ի վարդն ասաց, թէ աննմոնն ես.
Չկարէ մարդ հոգեղէն լեզուով գովել զքեզ.
Քան զտապարզի շաքար քաղցր ու շիրին ես,
Որպէս մուշկ ու ամբար անուշահոտ ես:

Վարդ բլբուլին ասաց թէ արևն դունն ես,
Որ ի բոլոր ալամս լուսով կուծագես,
Յով որ քաղցրիկ նայես և նազար առնես,
Այլ հասրաթ չի մնար, ով տեսնէ զքեզ:

Բլբուլն ի վարդն ասաց. Ե՛ւ պարի լուսին,
Չկայ քեզ օրինակ ջուհար մեծագին,
Բո՛ մէկ հայելդ արժէ զքաղաքն Մաչին,
Չէ Չինուամաչին մէկ հայելուդ զին:

Վարդն ի բլբուլն ասաց. Հասրաթով սրտին
Ինձ ալամս բոլոր չէ քո տեսուդ զին.
Յայնժամ հասանէ վարդն իւր մուրատին,
Երբ տեսանէ զբլբուլն ի մէջ տերևին:

Բլբուլն ի վարդն ասաց. Հոգիս քեզ Ֆրդէ,
Սիրով մէկ ծիծաղիր, որ արև ծագէ.
Լաթիֆ շրթանցդ շարժիլն հանցեղ շիրին է,
Որ թէ զհոգիս ուզես, սիրտս յօժար է:

Վարդն ի բլբուլն ասաց. ինչ սխասաթ է,
Որ ալամս բոլոր քո գէժ հասրաթ է.
Երկիրս ամէն ի քո կրակն ինկեր է,
Շատոց սիրտս ես լափերս որ ասելոյ չէ:

Բլբուլն ի վարդն ասաց. Դու չես հոգածին.
Դու ես բահրի նիտար, լատիֆ ու նարին.
Է՛ շահ սալվի աւան նազուք ու շիրին,
Թո՛ղ դու անփորձ մնաս քան զնշդարնին:

Վարդն ի բլբուլն ասաց. Ի՞նչ ապաթ կայ քեզ,
Որ յանկարծակի սիրտս կուխոցես.

Հազար հետ ամանաթ ու երդում տամ քեզ,
Զոր ինչ հետ ինձ արիր: այլ մարդոյ չանես:

Բլբուլն ի վարդն ասաց. Ես խիստ ուրախ եմ.
Դու մանչուր յալամիս, ես քեզ խնայեմ.
Եորժամ հեռանաս, նա զօրն ի մահ եմ,
Որ թէ զիս մոռանաս, յանկից կուվախեմ:

Վարդն ի բլբուլն ասաց. Է՛ լուծիֆ ու քարամ,
Որ առանց քո տեսուգ իմ կեանքս է հարամ,
Զազուր զձայնդ երբ լսեմ և ուրախանամ,
Դառնայ էլած հոգիս և կենդանանամ:

Նըղաշն ասաց թէ վարդն խիստ աղէկ է.

Օրս կորստական և անցաւոր է.

Թէ հանց մ' որ միաք ունիս և խելքդ ի բաց է,

Դու զայն վարդն սիրէ, որ զեց կենաց է:

Բանդի սէր աշխարհիս աւուրք մի քաղցր է.

Եետ բաժակ մահու և դժոխոց է.

Զի մահ կայ և մեռանիլ յետինն լաց է,
Եւ սարսափ դժոխոցն զիս կու մաշէ:

Տես Հայերգ 127.

8. ՏԱՂ Ի ԴԷՄՍ ՄԱՐԳԱՐԷԻՑՆ ԵՒ ԶՐԻՍՏՈՍԻ
ԵՒ ԼՈՒՍԱԻՈՐՉԻՆ.

Զինչ որ գեղեցիկ ծաղկունք
Կային, ամէնք գնացին.
Ծաղիկ մին այլ հանց գնաց,
Որ ամէն ծաղկունք զնա լացին:

Ծաղիկն անուշ խոտ ունէր,
Որ ամէն աշխարհս լսեցին,
Ու ամէն աշխարհաց ծաղկունք
Յայն ծաղկի սէրն գիմեցին:

Ոմանք յայն ծաղկի սիրուն
Չորցան ու դարձան գեղին,
Բազումք յայն ծաղկի սիրուն
Ծաղկեցան քան զնշդարենին:

Զայն ծաղիկն Աստուած երեւոյ
Մա ոմանք զղափարն չիմացին.
Ծաղիկն ով երեւա էա՞ զիւրն,
Շատ ոք ի վայր մնացին:

Ծաղիկն յանց անց գնաց,
Որ ամէն ծաղկունք խնդացին.

Հազար գոյն զգոյն ծաղկունք
Յայն ծաղկի սէրն ժողովին:
Ծաղկունքն յայն ծաղկի սիրուն
Շաղ առին ու շողշողային.
Ամէն ծաղիկն իւր գունովն
Այն ծաղկին գլուխ դնէին:
Ծաղիկ մի նորս բացուաւ
Այն գունովն այն ծաղկի տեղին.
Ծաղիկն Բրիստոս պահէ
Չայն ծաղիկն ի յոտս խաչին:
Ծաղկունք մարգարէքն էին
Մահապետք և սուրբք առաջին.
Ծաղիկն որ յետ նոցին,
Այն Յիսուս էր Հօր Միածին.
Ծաղիկն մի նորս բացուաւ
Սոյն գունովն յայն ծաղկի տեղին,
Ծաղիկն էր մեր Լուսաւորիչն
Շառաւիղ սուրբն Թագէտսին:
Մաղա՛շ Թէ դու խելք ունիս,
Միտ արա՛ դու դարնան ծաղկին,
Ու գունովք մի պայծառ լինին,
Չորանան ու դառնան դեղին:
Հանցեղ ծաղիկ մի՛ լինիր,
Որ տանէ զքեզ հողմն ու քամին.
Ծաղիկ լե՛ր բարի գործով
Որ պտուղ տաս դու հոգւով:
Տես Հայերգ.

9. ՏԱՂ ՀԱՐՍԱՆԵԱՅ ԵՒ ՈՒՐԱՆՈՒԹԵԱՆ
ՄԱՐԴԿԱՆ.

Մախ օրհնեմք զաստուածութիւն,
Որ ստեղծ զհրեշտակս ի լուսոյն,
ԶԱղամ արար ի հողոյ,
Եւ զկինն իւր ի կողոյ:

Ահա հոտն զայր զարնան,
Փեսին տեսնէր խիստ խնաման,
Յորտեղ սիրելիք որ կան,
Ամէնքն ի հարսնիք թող գան:

Ղամպար է վառեր փետոյն,
Փեսաղբեր մոմն վառման,
Ամենուն բարև կուտան,
Թող երկուքն ծերանան:

Այսօր է մեզ օր խնաման,
Հաւսար սիրելիք որ կան,
Հարսն են առեր ու կերթան,
Թող երկուքն յիրար խնդան:

Շարպաթ լից ու տուր կթղան
Յղբայր (թերի)

ԾԱՆՈԹ. Այս տաղն օրինակուեցաւ 1617 թուի
ձեռագիր տաղարանից. տների սկզբնատառերն են «Նա-
ղաշ»:

10. ՏԱՂ ՈՒՐԱՄՍՈՒԹԵԱՆ.

Մտտէք ի մէջլիս

Հ'արք և եղբ'արք

Եւ մեծ պարտնայք:

Գոհանամք ի Տեառնէ,

Որ ունիմք սեղան,

Եւ գուք շէն կենայք:

Խնդրեմք որ այսօր

Քան զամենայն օր

Շատ ուրախանայք:

Թասերն շինի,

Կարմրիկ գինի

Չեզ անոյշ լինի:

Ատա՛ կարապետ

Տակառապետին

Գնա՛ խմաց տո՛ւր.

Կարասներն բաց,

Ե՛կ խարար բեր մեզ

Եւ ուրախացո՛ւր:

Սիւրահիքն տա՛ր

Շուշէքն լի՛ց բեր,

Թաս տո՛ւր խմացո՛ւր:

Ղալապալուխ է,

Քէֆերս է հասեալ

Այսօր խիստ աղէկ.

Սեղանս լցեալ

Միրգեր և ծաղիկ,
Չլինի վեր քաղէք:
Ատա՛ հով կերէք,
Սրտով խմեցէք,
Ուրախ ծիծաղէք:
Թասերն չինի,
Կարմրիկ գինի
Թո՛ղ անոյշ լինի:

Կպա՛ ո՛վ սրտի

Քէն ունի, հանէ՛.

Հաշտութեամբ մնայ.

Լաւ մարդն այն է,

Որպէս եկեալ է

Էլ այնպէս գնայ:

Թասերն չինի,

Կարմրիկ գինի

Թո՛ղ անոյշ լինի:

Շոր մազէն համեղ,

Գինին է զօրեղ,

Դուք անոյշ արէք:

Մենակ մի՛ ուտէք,

Լաւ բաժանեցէք,

Հաւասար շարէք:

Տաղերն կանչէք,

Սաղերն աճէք,

Ժափ տուէք պարէք:

Ի՞ր չէք խնդալի
Այսօր ունիմք մէք
Լաւ զինի սառն.
Ղապլու խորովու
Հաւու քապապներ
Ու խաշլամայ գառն:

Իս մէջլիսու մն
Տխուր և դառն
Մարդ չլինի խառն.
Թասերն շարած
Ողջ ոսկէջրած
Խմողն է օրհնած:

ՄԱՆՕԹ. Սկզբնատառերն յօդում են «Նաղաչէ է».
առաջին անգամ հրատարակուած է Ճոաքաղի մէջ. տնս
1860/61 թ. եր. 216. կայ և Քնար Հայկականի մէջ եր.
427. Հ. Տաշեանի ցուցակին համեմատ այս տաղի
հեղինակն է Նաղաչ Յովնաթան (տնս Ցուց. Հայ. 2եռ.
մատենագ. Մխիթ. Ի Վիէննայ, եր. 1006). մեր կարծի-
քով այս աւելի ուղիղ կըլինի, եթէ Ճոաքաղի հրատա-
րակութիւնը տարբեր չէ Վիէննայի օրինակից:



11. ՎԱՄԻ ՂԱՐԻՊԻ.

Հոգի՛ մի՛ ասեր զարիպ, թէ չի՛ իմ սիրտս
կ'արունի¹.

Ղարիպն ի յօտար երկիր գեմ² խիստ դիժար
կուլինի.

Զինչ հաւքն³ երամէն ի զատ մոլորած և՛ ի
տեղ⁴ չի հանգչի

Այնչափ երերուն⁵ կենայ մինչ որ իւր երամն⁶
հասնի:

Ղարի՛պ, սիրտդ մի՛ նեղեր⁷, այս դիժար օրերս
անցնի.

Շատ զարիպ ի տուն դարձաւ, մի՛ վախեր թէ քեզ
չի լինի⁸.

ԶԱստուած ողորմած կ'ասեն, ողորմի ամէն զարիպի,
Բեզ այլ օգնական լինի, որ հասնիս սրտիդ մուրատի:

Հոգի՛, ամ⁹ դու լաւ¹⁰ կասես, սիրտս է սև
քան զգործելի.

Ի զարիպութեան դարտէն երեսիս գոյնն կու-
քաղի¹¹.

Յորժամ ես ի միտ ածեմ¹² զիմ եղբարքն և
զիմ սիրելիքն,

Հոգիս բերանիս կառնու¹³, կուքակաի¹⁴, ճա-
րակ մի չունիմ¹⁵:

Ղարիպ, զուսայ մի՛ աներ, զուսայէն մարդ ի՛նչ
կուշահի¹⁶.

Շատ մանուկ զուսայ կանէ, ի շահին տեղն կուզենի¹⁷.

Ղուսան շատոց ցաւ բերէ¹⁸, ի ցաւէն մարգն մեռանի.
Զինչ սիրտն ի հասրէթ ունի, ամենէն մահրում
կուլինի:

Աւաղ զղարիպն ասեմ, որ յօտար երկիր հան-
դիպի¹⁹,

Աչերն արտասուօք ի լի, յերեսէն²⁰ ի վայր
կութափի:

Յորժամ ի մէջլիս նստի, յանկսկած²¹ սրտիկն
արունի,

Զաչերն ի բոլորն ածէ, կարևոր և զոք նա
չունի²²:

Ամէնքս եմք զարիպ, եղբարք, հայրենի մարդ իս-
կի չունի²³.

Հաւասար գնալու եմք, զի այն կեանքն է մեզ հայ-
րնի:

Աստէնս քեզ ճարակ արա՛, որ յանտէնն հոգիդ չի
տանջի,

Զսուրբքն ի քեզ եղբայր²⁴ շինէ, ու զհրէշտակք
արա՛ սիրելի:

ԾԱՆՕԹ. Օրինակուեցաւ 1695 թուի ձեռագիր
տաղարանից բաղդատութեամբ 1617 Քրչ. օրինակի հետ.
Վերնագիրն է «Տաղ վասն զարիպի վերայ խիստ ողոր-
մելի»․ առաջին անգամ լոյս է տեսել 1861 թուին Բազ-
մափէպի մէջ, երկրորդ անգամ նոյն տեղում 1875 ին. մի
հատուած լոյս տեսաւ Ներս. Գպր. ձեռագրների ցուցա-
կում 1893 ին. Նշանաւոր տարբերութիւններն են. ¹ ա-
րունի. կար ունի. ² ամ. ա՛խ ամ: ³ հաւն. ⁴ ւ՛ ի տեղ

Ղարիպին խելքն է կորեր, միտքն է մոլար.
Եւ թէ լինի քան զՍողոմոն մտօք ճարտար,
Որ թէ խօսէ բան մի քանի անգին ճոհար⁷,
Սաստեն նմա թէ լուռ⁸ կացիր, անգէտ յիմար:

Ղարիպին ցերեկն⁹ եղո՛ւկ, գիշերն է վայ.
Աչերուն քունն է հատեր որ ճար չկայ.
Մտօք տանջի գիշերն ի բուն, ոչ գուրանայ¹⁰.
Վաղիւն ես ի՞նչ լինիմ գերիս, երբ լուսանայ:

Ղարիպին վայն է եկեր¹¹, երբ քաղցենայր,
Երես ի քաշ ի փողոցերն կու մուրար¹²,
Շատոք փակէր զգուռն ի զիմաց, նստէր ու լայր.
Թէ կաթ մի ջուր ուզէր գերին, մէկ մի չտայր:

Ղարիպին աղքատութիւնն է խիստ գիժար¹³.
Յամէն զիմաց էր նեղացած, ու ճար չկայր.
Ղարիպն օտար էր ու պանդուխտ յերկիր օտար,
Թէև ի փոխ ուզէր գերին, մէկ մի չտայր:

Ղարիպն ի տուն երթայր մանէր վախվախելով.
Ո տան տիրուն զինչ ի շանէն խիստ վախելով.
Յորժամ տեսնուն ի գուրս հրեն անարգելով,
Եւ նա ի յեա դառնայր տրտում արտասուելով:

Շատոց սեղան լինէր դրած հազար բարով.
Եւ գայր զարիպն մտանէր ամաչելով.
Եւ հազար գէշ տսեն նմա անարգելով,
Ապա թէ տան կտոր մի հաց արտնջելով:

Ղարիպն խեղճ էր, նա երբ յանկարծ հիւանդանայր,
Յօտար փողոց մոխրաթաւալ անկեալ կենայր.

Եւ կայր անկեալ մէջ փողոցին անտիրական,
Մէկ մի չեկաւ տես դարիպին և ոչ լալական:
Տես թէ զի նշ դառն է մահ ու կեանքն զա-
րիպին.
Մէկ մի չկայր զձեռն խաչէր ի վերայ սրտին.
Ժիծաղելով առին²¹ տարան յեզեր²² հողին,
Մէկ մի չեկաւ անդ ի թողումն դարիպին:
Նաղաշն ասաց թէ դարիպին կեանքն է հարամ.
Ջգարիպին հալն գիտեմօ օր վայ կուտամ.
Թէպէտ տեսաց զամէն մարդոց լուծֆ ու քարամ:
Ջգարիպու թիւնն յորժամ յիշեմ քան զուռ դողամ:
Նաղաշն ասաց թէ դարիպին սիրան է քըն-
քուշ²³,
Քաղցրն լեղի թուր նմա զինչ վարդն փուշ²⁴,
Ջենէհաւ²⁵ հետ դարիպին զրուցէ անուշ,
Ողորմութիւն տուր ու քաւէ զմեզացն փուշ:
Ամենօրհնեալ կոյս Մարիամ Աստուածածին,
Ջենէհաւ դու օգնական լեր դարիպին.
Ջամէն դարիպ բարով հասու իւր մուրաւին,
Եւ քեզ ամէնքս երկրպագեմք, Աստուածածին²⁶:

ԾԱՆՈԹ. Օրինակուեցաւ 1695 թուի ձեռագիր
տաղարանից և համեմատուեցաւ 1617 թուի օրինակի
հետ. վերնագիրն է «Տաղ վասն դարիպի ի նաղաշէ ասա-
ցեալ». առաջին անգամ տպագրուած է, որքան յիշում
ենք, Կ. Պօլսում 1807 թ. Մեծ Մաշտոցի մէջ. ապա
լոյս տեսաւ 1862—63 թ. «Արժուի Վասպուրական»
հանդեսում: վերջինս օրինակուաւ է Բաղէշու Խնդրակա-

տար վանքի ձեռն. Մաշտոցից. նոյն հանդէսի մէջ այս տա-
ղի առթիւ կարդում ենք հետևեալը. « Ասիկայ 163 տա-
րի առաջ ՌՃԽԸ. Թուին Հայոց, 1699 ին, Մուրատ ա-
նուն բանաստեղծին յօրինածն է և այլն » . Թէ ի՞նչ աղ-
րիւրից է յայտնի, որ սոյն տաղի հեղինակը կոչուում է
Մուրատ, չէ նշանակուած. 1695 Թուի ձեռագիր տա-
ղարանից և վերևն յիշուած հրատարակութիւններից ե-
րևում է որ երգիս հեղինակն է նազաշ :

Ձեռագիր և տպագիր օրինակների մէջ նշանաւոր
տարբերութիւններն հետևեալներն են. 1 Թափօրական.
2 հանած վարժած.—հանավարած կասեն նմա. 3 չիք.
4 շաքար. 5 յառաջէ. 6 սիրտն ու փորն. 7 ճոհար, գոհար.
8 սուս. 9 ցորեկն. 10 դիւրանայր. 11 եկեալ. 12 երեսն
քարշ ի փողոցներն երթայր մուրայր. 13 այս տողից յե-
տոյ 12 տող չկայ տպածների մէջ. 14 և կայր անկեալ
վրայ երեսին գառն ու կուլայր. 15 զի՞նչ կու լինամ. 16
այ վա՛ն չգիտեն, աւաղ գիտեն. 17 քարն բարձ էր ա-
ւազն արած իւր անկողին. 18 մեկնէր. 19 զգարիպ հոգին
հաղորդութեամբն ուրախ առնէ. 20 եկեալ եհաս ժամն
մահուան.—եկեալ հասեալ է օր մահուան. 21 առեալ.
22 յեզր. 23 այս տեղից չորս տող պակաս (Արծուի մէջ).
24 զէտ վարդի փուշ. 25 դու զէնէհար, — զինհար. 26
կոյս տիրածին :



ՅԱՆԵԼՈՒԱԾ.

- Ա. Վասն զարիպի « Ի քէն Տէր Հայցեմք » Զախար.
- Բ. Տաղ վասն զարիպութեան « Վայրի Հաւուկ մի եմ ».
- Գ. Ի վերայ կռունկին « Կռունկ ուստից կուգաս »
Քուչակ նահապետ.
- Դ. Գովասանք զարիպի « Գերիս ընդ որ երթամ ».
- Ե. Տաղս վասն զարիպի « Ի յօտար յերկիր Հեռացայ ».
- Զ. Տաղ վասն զարիպի Համար « Սրտիկս խոցեալ է ».
Սիսկոն:



APPENDIX

1. The first part of the book is devoted to a general survey of the subject.
2. The second part contains a detailed account of the various methods employed.
3. The third part is a collection of the most important results obtained.
4. The fourth part is a summary of the whole work.
5. The fifth part is a list of the names of the authors and their works.

Ի քէն Տէր հայցեմ՝ Հայր զթական,
 Պարգևէ ինձ իմաստ տիրական.
 Երգել բանս վասն զարիպութեան,
 Որ լինի յերկիր հեռաստան:

Ղարիպն թէ լինի մեծատուն,
 Ետեղօքն և մոօքն իմաստուն,
 Ես յիմար թուի յաչս ամենուն,
 Եւ կենայ նա տրտում զօրն ի բուն:

Այլ թէ զղարիպն ասեմ ողբալի,
 Անձանաչ յօտար տեղ հանդիպի,
 Միտ ածէ զիւր եղբարք սիրելի,
 Միրտն ողբայ և աչերն արտասուի:
 Բամեալ խիստ խեղճ և ողորմ նա կենայ,
 Զօրն ի բուն սիրտն չուրախանայ.
 Թէ լինի որ յանկարծ քողցենայ,
 Երես ի քարշ երթայ մուրանայ:

Իսկ թէ լինի փակած զբունքն ամէն,
 Միրտն ողբայ և դառնայ ի դրոնէն,
 Եւ կենայ տրտում զօրն ամէն,
 Արտասուքն թափի երեսէն:

Պարտաւոր կարծէ զինքն ամենի,
 Եւ մեծի և փոքեր հնազանդի.
 Զախմարն և զանգէտն շահի,
 Միթէ իւր բազում մեղքն քաւի:

Ձինչ դարիպ կայ յերկիր հեռաւոր,
Ամենուն խելքն ու միտքն է մոլոր.
Թէ լինի խիստ փարթամ փառաւոր,
Դըռնէ դուռն շրջի գլուխ ի կոր:

Աւազ զղարիպն ասեմ եղկելի,
Որ յօտար երկիր հանդիպի,
Ամենքն են քան զդրախտ ծաղկալի,
Նա կարած քան զձիւզ մի ծառի:

Քան զձուկն է ի ջրէն նա հանած,
Որպէս հաւ երամէ բաժանած,
Որպէս ձագ ի մօրէ մոլորած,
Ձի եղբարց սիրելեաց է զատած:

Այլ թէ շաքար ուտէ, նա լեղի.
Թէ վարդով զբուցեն, փուշ թուի.
Եւ կենայ զօրն ի մէջ զուսայի.
Եւ զգիւր կեանքն զիժար համարի:

Քամից դասքն հրեշտակաց ամենայն
Ղարիպին լինիցին պահապան,
Որ յօտար ի յաշխարհ հեռաստան,
Մինչ յիւր տեղն հասնի յօթեան:

Երգողի այս տաղիս դարիպի
Մեղաւոր և անմիտ Ջաքարի,
Մեք ամէնքս եմք դարիպ յաստենի,
Ձի այն կեանքն է մեզ տուն հայրենի:

ԾԱՆՕԹ. Օրինակուեցաւ 1695 թ. ձեռ. տաղա-
բանից. հեղինակն է ոմն Ջաքար. տների գլխատառերն
հիւսուամ են « ի դարիպ Ջաքարե »: Այս տաղի մէջ ար-

բ. ՏԱՂ ՎԱՍՍ ՂԱՐԻՊՈՒԹԵԱՆ.

Վայրի հաւուկ մի եմ բռնած ու բերած,
Դրած զիս ի նեղ զընդան. չուրախանայր սիրտ
Բաժանելոյս յընկերացս,
Որ շեմ յիմ երամ¹:

Սրտարհկեալ եմ միջակոտոր.

Ճար չունիմ զինչ լինիմ² գերիս.

Եթէ զբլբուլ ու զումրին⁵

Բերեն ինձ հրգասաց գուսան, չուրախանամ⁴.

Եթէ հազար գոյն զգոյն փետուրներ⁵

Ինձ բերեն խալաթ տան⁶, չուրախանամ⁷.

Եթէ զշաքարն ի Սազածու

Բերեն ինձ կերակուր տան⁸, չուրախանամ.

Եթէ հազար թախթ ի հուքիմ ինձ տան,

Ու հարիւր հազարի տէր առնեն⁹, չուրախանամ¹⁰.

Եթէ բիւր բիւրոց¹¹ ինձ ծառայ բերեն,

Անհամար հեծել ձիուոր, չուրախանամ.

Եթէ զարպաս ինձ շինեն¹² ոսկեով,

Զարգարած անզին մարգարտով, չուրախանամ:

Եթէ հնար ու ճարակ լինէր

Ինձ ելնել ի նեղ զընդանէս¹³.


Եթէ լինէր, որ թռչի¹⁴, բարձրանայի,

Ծարձուած են զգացմունքներ այնպիսի խօսքերով, որ
կրկնուում են հետեւեալ ժողովրդական երգի մէջ, որ նոյն-
նութեամբ մէջ ենք բերում.

Տեսնի¹⁵ զիմ երամս¹⁶, խաղալով: Ճախրելով
Ու կարկաչելով խառնիլ յիմ երամս,
Յայնժամ ուրախանայր սիրտ բաժանելոյս,
Յայնժամ խառնէի յընկերացս երամ:

ԾԱՆՕԹ. Այս երգն առաջին անգամ հրատարակուել է 1862 թուին Բազմավէպի մէջ « Անընկեր » վերնագրով, ապա 1876 թուին Սրուանձտեանի Մանանայի մէջ. նշանաւոր տարբերութիւններն այս են. 1 այս տողն չիք. 2 լինամ: 3 և 4 չիք. 5 փետուր. 6 բերած խլղաթ կուտան. 7 չուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերաց. 8 թէ շաքարն է մազած շաղուած բերած ինձ կերակուր կուտան. 9 այնեն. 10 յաջորդում են այս խօսքերը « քե հազար ինձ մկջիս դնեն, քաղցր երգով զիս գուարացնեն, յուրախանար. 11 թէ հազար. 12 մեր շինած. 13 յաջորդում են այս խօսքերը. « յայնժամ ուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերաց ». 14 թռչէի. 15 տեսանիլ. 16 զերամս. ապա յաջորդում են այս խօսքերը. « յայնժամ ուրախանար սիրտ բաժանելոյս յընկերացս, որ խառնիմ յերամս, արդ զարնում ի քնոյ զերդ տոյս մօր զրկի ի քնն և օրհնեմ զխսուած կենդանի, դրաց զիս ի յերամս »:

Լ. Յ. Տաշեանի ցուցակի մէջ նշանակուած են այս երգի առաջին տողերն, թէև ձեռագիրը թուական չունի, բայց Ժ. Ժ. գարու գրչութիւն է (տես Յուլ. Լայ. 2ևո. Մատեն. Մխ, ի Վիեննա. եր. 856):



գ. Ի ՎԵՐԱՅ ԿՌՈՒՆՆԻՆՆԵՐ.

Կռնունկ ուստից¹ կուգաս, ծառայ եմ ձայնիդ.

Կռնունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս.

Մի՛ վազեր, մի՛ վազեր, դու թէզ կ'երամես².

Կռնունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:

Չայնիկդ անուշ կուգայ քան զՋրի տօլապ,

Քեզ քան հարցանոցին չես աներ տալապ³.

Կռնունկ Պաղտատ կ'իջնաս, եօխսայ մի Հալապ⁴.

Կռնունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:

Թողեր եմ ՚ւ եկիր եմ մուլքերս ու այգիս.

Երբ որ անհ կուքաշեմ կուքաղօւի շունչս⁵.

Կռնունկ պահ մի կացիր, ձայնիկդ⁶ ի հոգիս.

Կռնունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:

Սրտերներս⁷ կամեցաւ, ելաք զնացաք,

Այս սուտ սատընվորի բաներն⁸ իմացաք.

Աղուհացիեր մարդկանց կարօտ մնացաք,

Կռնունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:

Հավաստվ եմ պառկեր, ներքես է Փուշխի⁹.

Հոտուն այլ չեմ պշկար, կութուի մուշկի.

Հասրաթով մնացի անկողնի, տօշկի,

Կռնունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:

Աստուած, ի քէն¹⁰ խնդրեմ մուրվէթ ու քերամ.

Ղարիպի սրտիկն¹¹ է խոց, ծիկերն է վարամ:

Իւր կերած հացն է լեղի, և ջուրն է հարամ¹².

Կռնունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:

Ղարիպուլթիւնն էլէ¹⁵ կամաց կամաց է.

Միթէ Աստուած լսէ, նա դրունքն ի բաց է¹⁴.

Ղարիպի սիրտն է ի սուք, աչերն ի լաց է.

Կռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:

Ոչ զլուրն զիտես¹⁵, ոչ զկիրակին:

Զարկած է ի շամփուրն¹⁶, բռնած կրակին.

Խորվելս չեմ հոգար, քենէ կարօտ եմ¹⁷,

Կռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:

Սրաէս չերթար, հոգեկ, զարկած նետերն¹⁸.

Գնամ, ես զիս ձգեմ էլած գետերն¹⁹.

Խեղճիւ²⁰ չեմ հոգար, քենէ²¹ կարօտ եմ:

Կռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:

Ի Պաղտատու կուգաս, կ'երթաս ի սահրաթ,

Թղթիկ մի գրեր եմ²⁵, տամ քեզ ամանաթ.

Աստուած այլ²⁴ թող վկայ քո վերատ.

Կռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:

Գրեր եմ մէջ թխտիս, թէ հոս մնացի,

Օրիկ մի օրերուն²⁵ զաչերս չբացի,

Սիրելիք, ձեզանէ կարօտ մնացի.

Կռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:

Այսօր զարիպուլթիւնն միակ միաւոր²⁶

Հոգով այլ և մարմնով ես եմ մեզաւոր.

Սուրբ Սարգիս այլ օգնական այն պօղ ձիաւոր.

Կռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:

ԾԱՆՕԹ. Օրինակուեցաւ 1695 թուի ձեռ. տա-
դարանից. առաջին անգամ լոյս է տեսել 1847 թուին Բազ-
մազէպի ձեջ, ապա 1856 ին Գամառ Բաթիպայի երգա-

դ. ԳՈՎԼԱՍԱՆԷ ՂԱՐԻՊԻ.

Գերիս ընդ որ երթամ մոլար.
Ղարիպութիւնն է խիստ գրժար.
Թէ հաց կուտեմ ի վայր չերթայր,
Զուր կու խմեմ լեղի և դառ:
 Ի տուն հստիմ հանգիստ չի տար.
 Սրտիկս ի փորս առնոյր գալար.
 Բունն աշերուս տրար վճար.
 Բնութիւն կամնացս չէ ճարտար:
Ենտ դառնալոյ չկայ ինձ ճար,
Զի ի հոգւոյս եղէ պէղար.
Եառաջ կ'երթամ յոտքըս չերթար,
Զի ճանապարհս է խիստ երկար:

րանում և 1858ին Նոր-Քնար Հայաստանի ժողովածուի և յետոյ նաև այլ տաղարանների մէջ. հեղինակն անձա-նօթ էր համարուում: սակայն ինչպէս 1893 թուի Արձա-գանքից (№ 101) երևում է, սորա հեղինակն է Խառակու-նիս գիւղացի Բուշակ (Չիչակ) Նահապետը (տես Նոր Ժո-ղովածու Ա. պրակ. 71). Թէև ձեռագրից արտագրածը 12 տուն է, բայց տպած օրինակների մէջ մի տուն ևս կայ, որ ձեռագրի մէջ չկար. այդ տունն է

« Աշունն է մօտեցեր, գնալու ևս թէպար.
Երամներ ևս ժողովել հաղարներ ու բիւր.
Ինձ պատասխան չտուեր, ելար գնացիր.
Վառնիկ մեր աշխարհէն գնա՛ հեռացիր »

Այսպիսով մինչ ցարդ յայտնի օրինակներից երևում է, որ այս երգն ունի ընդամենը 13 տուն կամ 52 տող, որոն-

Իմ մեղքն շատ է, անհամար,
Որ զիս կուտայ ի տարէ տար.
Մէջ նեղութեան եզայ մոլար,
Մէկ մի չկայ ինձ մխիթար:

Այն որ առնէ բարեաց վճար,
Մեղաւորացն է քաւարար,
Զքեզ հանէ յանդորութիւն,
Եւ դու իսկի մի՛ ճրճկուհար:
Կայ որ ասեմ քեզ բան ճարտար,
Զոր ի յառաջն Աստուած արար.
ԶՅովսէփ մանուկն սուրբ և արդար,
Որ Բետարբէ որդի արար:
Ետոյ ի գուր մատնեաց զնա,
Եւ բանդարգել զնա արար:

ցից տարագրութեան մէջ մեր խմբագրութիւնից յառաջ
ծանօթ էր միայն 40 տողք. նշանաւոր տարբերութիւնները
հետեւեալներն են.

1 ուստի. 2 մի վաղեր, երամիդ շուտով կը հասնես.
5 Բեզ խաբար հարցնողին շես տանիր տալբար, ձենիկդ ա-
նուշ կուգայ քան զՋրի տօլար. 4 կամ թէ ի Հալապ.
5 քանի որ ա ի կանեմ, կու քաղի հոգիս. 6 ձենիկդ,
7 սրտերնիս 8 դարդերն. 9 այս և հետեւեալ տողերն չիք.
10 քեզնէ. 11 սիրան. 12 իմած ջուրն է լեղի ու հացը հա-
րամ. 15 աստըն որիս բաներն. 14 դռնակն բացցէ. 15 ոչ
զլուր օրն գիտեմ. 16 զարկած է զիս շամիրուն. 17, 18, 19
չիք. 20 այրելս. 21 ձեզնէ. 22 Բաղդատու. 25 թղթիկ մի
գրեմ. 24 չիք. 25 օրեր. 26 այս և հետեւեալ 3 տող չիք:

Այն որ գիտէ զծածուկ սրտին
Եւ քննէ զխորս անձառ,
Որ և Եհան զնա ի բանտէն,
Յեգիպտոսի զնա տէր արար,
Ով որ չարին կու համբերէ,
Բարուն հասնի կառնէ վճար:

Ձեռ. տաղ. 1695.

Ե. ՏԱՂ ՎԱՄՆ ՂԱՐԻՊԻ.

Ի յերկիր օտար հեռացայ,
Չսիրելիս իմ մոռացայ,
Ի մէջ ծաղկանցն վառեցայ,
Եղէ ցաւալից ցաւալից:
Այնչափ սաստիկ է և դժուար
Ղարիպութիւնն, որ չկայ ճար,
Վկայ է Տէր և սուրբ տաճար,
Եղէ ցաւալից ցաւալից:
Տիւ և գիշեր ողբայ և լայ.
Տէր իմ Աստուած ինձ ողորմես,
Ղարիպութեանս իմ ճար արաւ.
Եղէ ցաւալից ցաւալից:
Մինչև յերբ լաս աղաղակես,
Չանձգ կոչես և հառաչես.

Ո՛վ եզկելի՛, զէմ՛ ծառայ չես.

Եզէ՛ ցաւալից ցաւալից:

ԾԱՆՕԹ. Այս տաղն օրինակուեցաւ 1695 թ. ձեռ. տաղարանից, որի մէջ նոյնը երկու լեզուով է, փոխ առ փոխ մէկը թուրքերէն մէկը հայերէն. հեղինակն անծանօթ է. թուրքերէն տներն այս են.

Պու զիւնեանըն օթէսի եօք,

Ղարիփլիք տիր տէմիրտէն օք.

Մխլանդի իւրէկիմէ չօք

Օլտում փերուշան փերուշան:

Ղարիփլիք տէտուրայ տուրայ.

Ախլիմ ալտի պուրայ պուրայ,

Պիզէ կտէն հաքտան պուլայ.

Օլտում փերուշան, փերուշան:

Կէճէ կիւնտիւզ կտերիմ ախ.

Մէվլամ պանկայ տէտիրմէ վախ.

Եազար էյլէ դուլունկայ պախ.

Օլտում փերուշան փերուշան:

Զիմի օխուր, քիմի եազար.

Աղլամաքտան օլտում պէզէր.

Սուփհան Ալլահ էյլէ նազար.

Օլտում փերուշան փերուշան:

գ. ՏԱԶ ՎԱՄՆ ՂԱՐԻՊԻ ՀԱՄԱՐ

Սրտիկս խոցեալ է սրով, տէրտէր ունիմ շառ
ողբալով:

Յեւայ զարիպութեան գնացի ճորով,

Լացի կարաւտով կարաւտով, հասրէթով:

Ի տուէ և ի գիշերի սիրտ անդազար բռնեալ

Կայր ի զարիպութեան այսքան տարի.

Լացի կարաւտով կարաւտով.

Մարդ չունեմ խռատող բարի,

Սիրտս նովաւ մխիթարի.

Ղարիպութեան այսքան տարի

Լացի կարաւտով հասրէթով:

Էն զարիպին սիրան է վերան.

Էն գիմանաւղ որ կու գերեան.

Այնոր համար բացի բերան,

Լացի կարաւտով կարաւտով.

Ողբալով տէրտէր քաշեցի,

Քեանքս իմ ես աւտար մաշեցի.

Ղարիպութեան մահն յիշեցի

Լացի կարաւտով կարաւտով հասրէթով:

Մայիմ սիրուն նազլի եղբարբ,

Էկէք իմ հալիս տեսէք,

Ղարիպո թեան հիւանդ մնացի,

Լացի կարաւտով կարաւտով:

Սիմեոն.

ԾԱՆՕԹ. Այս երգիչն է Սիմէոն Խրմայէի որդին.
տես նոր ժողովածու Գ. պրակ.

Յ Ա Ն Կ

Երես.

- Ա. Մկրտիչ Եսաղաշ. նորա կեանքն եւ գործունէութիւնը Ե.
- Բ. Եսաղաշի տաղերը 1
- 1 Ունայնութիւն աշխարհիս «Երագ է սուտ» եղբայրք» 3
- 2 Վասն մահուան «Անցանէ մեծութիւն» 5
- 3 Ողբ վասն մեռելի «Արարիչն արարածոց» 9
- 4 Վասն ազահութեան «Սողոմոն մայրն իմաստութեան» 13
- 5 Խրատ խոովչկենալու «Ա՛յ անձն իմ՝ վայ» 20
- 6 Խրատք եւ կշտամբանք անձին «Ա՛յ անձն իմ՝ աղօթէ» 23
- 7 Գարրիէլ եւ Մարիամ «Բլբուլն ի վարդն ասաց» 26
- 8 Տաղ ի դէմն մարգարէիցն եւ Բրիստոսի եւ Լուսաւորչի «Զինչ որ գեղեցիկ ծաղկունք» 29
- 9 Տաղ հարսանեաց եւ ուրախութեան «Եսախ օրհնեմք» 31
- 10 Տաղ ուրախութեան «Եստէ՛ք ի մէջլիս» 32
- 11 Վասն դարիպի «Հոգի՛ մի՛ ասեր դարիպ» 35
- 12 Վասն դարիպի «Դարիպին կեանքն է լալի» 37

| | | |
|----|---|----|
| Գ. | Յաւելուած | 43 |
| ա | Վասն դարիպի «Ի քէն Տէրհայցեմք» Զարար | 45 |
| բ | Տաղ վասն դարիպութեան «Վայրի հա- ւուկ մի եմ» | 47 |
| գ | Ի վերայ կոռնկին «Կոռնկ ուստից կու- գաս» Բուշակ Նահապետ | 49 |
| դ | Գովասանք դարիպի «Գերիս ընդ իր թամ» | 51 |
| ե | Տաղ վասն դարիպի «Ի յերկիւր օտար հե- նացայ» | 53 |
| զ | Տաղ վասն դարիպի համար «Մրտիկս խո- ցեալ է» Սիմէօն | 55 |



Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

ՀԻՒՍՈՒԱԾ ԲԱՆԻՑ ՆԱԽՆԻ ՊԱՏՄԱԳՐԱՑ ՀԱՅՈՑ. ՎԻԵՆՆԱ, 1877.

ԳԻՐՔ առաջին՝ բնագիր (գրաբառ).

ԳԻՐՔ երկրորդ՝ բնագրի թարգմանութիւնն աշխարհաբառ. Բ. տպագր. թիֆլիս, 1894.

ԳԻՐՔ երրորդ՝ ծանօթութիւններ.

ՀԱՅՈՑ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԿՐՕՆԸ. Վաղարշապատ, 1879.

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՕՐԲԵԼԵԱՆԻ ՈՂԲ Ի Ս. ԿԱԹՈՒՂԻԿԷՆ. ԹԻՖ-
ԼԻՍ, 1885.

ԹՈՎՄԱՅ ՄԵԾՈՓԵՑՈՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ. ԹԻՖԼԻՍ, 1892.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՂԿՈՒՐԱՆՑԻՆ ԵՒ ԻՐ ՏԱՂԵՐԸ. ԹԻՖ. 1892.

ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ. միջնադարեան Հայոց տաղեր եւ ոտանաւորներ.

Ա. պրակ. թիֆլիս 1892

Բ. պրակ. թիֆլիս 1892.

Գ. պրակ. թիֆլիս 1896.

ՀԱՄԱՄ ԱՐԻԻԵԼՑԻ. Վաղարշապատ, 1896.

Ս. ԼՈՒՍԱՆՈՐԶԻ ԱԶԸ. Վաղարշապատ, 1896.

ՏԵՐ ՊԵՏՐՈՍ Ա. ԳԵՏԱԳԱՐԶ. Վաղարշապատ, 1897.

ԳՆԱՍԱԳՐՔԵՐ.

ԳՐԱԲԱՌԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ. ԹԻՖԼԻՍ 1881.

ԳՐԱԲԱՌԻ ՀՈՂՈՎՈՒՄԸ. նոյն


ԾԱՂԿԱՔԱՂ արձակ եւ չափաճոյ բանից. յերիս շրջան. ԹԻՖ. 1881

ԾԱՂԿԱՔԱՂԻ Ա. ՇՐՋԱՆ. Գ. տպագր. թիֆլիս 1894.

ԾԱՂԿԱՔԱՂ Բ. ՇՐՋԱՆ. Բ. տպագր. թիֆլիս 1894.

ԲԱՌԱՑՈՒՑԱԿ Ա. շրջանի ծաղկաքաղի համար. ԹԻՖԼԻՍ 1885.

ՆԱԽԱՇԱՒԻՂ Բ. տպագր. թիֆլիս 1893.



THE HISTORY OF THE

... ..
... ..
... ..
... ..

... ..
... ..
... ..

... ..
... ..
... ..
... ..

... ..
... ..
... ..

APPENDIX

... ..
... ..
... ..
... ..
... ..
... ..
... ..
... ..